Azg
armenian daily
12 ՄԱՐՏ 2004 ՈՒՐԲԱԹ 43 (2968)

Ուրուգվայում Ապրիլի 24-ը ամեն տարի պաշտոնապես նշվելու է

Մարտի 10-ին Ուրուգվայի խորհրդարանը (ստորին պալատը) ընդունել է 2000 թ.-ին Սենատում հավանության արժանացած այն օրինագիծը, ըստ որի ամեն տարվա ապրիլի 24-ը պաշտոնապես համարվում է «1915-ին սպանված հայ նահատակների հիշատակության օր»:

Օրինագիծը նշում է նաեւ, որ այդ «օրը պետական լրատվամիջոցները պետք է լուսաբանեն այդ դեպքերը»:

Այս միջոցով մշտական բնույթ է ստանում 1965 թ.-ի համար ընդունված որոշումը:

Ուրուգվայի նախագահի վավերացումից հետո օրինագիծը դառնալու է օրենք:

Թեեւ օրինագծում չի նշվում ցեղասպանություն բառը, սակայն խորհրդարանում բոլոր ելույթ ունեցողները չեն խուսափել կատարվածը ցեղասպանություն որակելուց. Մոնտեվիդեոյից հաղորդում է «Ռադիո Արմենիայի» լրագրող Դիեգո Գարամանուկյանը:

«Ես ակնկալում եմ անկեղծ եւ անկաշկանդ զրույց իմ հայ գործընկերոջ հետ»

Միխեիլ Սաակաշվիլու հատուկ հարցազրույցը «ԱԶԳ» օրաթերթին եւ հայկական 2-րդ հեռուստաալիքին

Երեկ երեկոյան 20.00-ին նշանակված «Ազգի» եւ հայկական 2-րդ հեռուստաալիքի հարցազրույցը Վրաստանի նախագահի հետ, որը կազմակերպվել էր ՀՀ արտգործնախարարության եւ Վրաստանում ՀՀ դեսպանության աջակցությամբ, փոքր-ինչ հետաձգվեց մարտի 8-9-ին Ֆրանսիա կատարած այցի արդյունքներին նվիրված Մ. Սաակաշվիլու տեղական լրագրողներին տրված մամլո ասուլիսի պատճառով:

Խոսելով այցի ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների մասին Վրաստանի նախագահը նշեց, որ ստացել էր Ֆրանսիայի նախագահի համաձայնությունը Վրաստանում Ֆրանսիայի դեսպան Սալոմե Զուրաբիշվիլուն Վրաստանի ԱԳ նախարարի պաշտոնում նշանակելու մասին: Հետաքրքրական է, որ այս բոլորի համար անստվերելի լուրը չզարմացրեց Վրաստանում ՀՀ դեսպանության աշխատակիցներին. տիկին Ս. Զուրաբիշվիլու կենսագրությունը Վրաստանի նախագահի հայտարարությունից 10 րոպե անց ՀՀ ԱԳ նախարար Օսկանյանի սեղանի վրա էր: Մեզ հետ հարցազրույցի ընթացքում մեկնաբանելով նշանակումը Մ. Սաակաշվիլին նշեց, որ այս հարցում նույնպես ընդգծենք է հայկական փորձը (նկատի ունենալով ՀՀ ԱԳ նախարարի մինչեւ պաշտոնի ստանձնումը Հայաստանի քաղաքացիություն չունենալու հանգամանքը): Այնուհետեւ Վրաստանի նախագահը պատասխանեց հայ լրագրողների հարցերին զրույցի ընթացքում:

- Ես միշտ հաճույքով եմ խոսում հայ լրագրողների հետ, ինձ համար դա նմանապես թանկ է, ինչպես եւ վրացի լրագրողների հետ: Ես կարծում եմ, որ դա ինչ-որ օտարերկրյա տարածք չէ, այլ մեր ռեգիոնի բարությունը, մեր մոտ ընկերը, ուստի Հայաստանում ասված յուրաքանչյուր խոսք արձագանք է ստանում Վրաստանում:

- Պարոն նախագահ, որո՞նք են Վրաստանի քաղաքական եւ տնտեսական առաջնահերթությունները Հայաստանի նկատմամբ:

- Ամեն ինչ շատ պարզ է: Հայաստանը մեր ընկերն է, մեր հարեւանը, եղբայրական հանրապետություն է: Եվ այստեղ պետք չէ խոսել ինչ-ինչ ոլորտային առաջնահերթությունների մասին: Այս հարաբերությունները նախ եւ առաջ պետք է արտից գան: Եթե դրանք արտից չեն գալիս, չի կարող լինել մեծ բարեկամություն: Ես միշտ կրկնում եմ, որ մենք կովկասցիներ ենք, Կովկասն էլ մեկ միասնական ռեգիոն է:

Տես էջ 8

«Դվինը» կմասնավորեցվի «Կովկասյան կոմունիկացիոն խումբ» ընկերությանը

ԵՐԵՎԱՆ, 11 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: «Դվին» հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի 10 000 դրամ (մոտ 18 ԱՄՆ դոլար) անվանական արժեքով կանոնադրական կապիտալի 100 տոկոսը կազմող 2880 հատ սովորական բաժնետոմսերն ուղղակի վաճառքի ձեւով կմասնավորեցվեն նախօրոք հայտնի գնորդ «Կովկասյան կոմունիկացիոն խումբ» ՓԲԸ-ին: Ինչպես «հայտնեցին ՀՀ կառավարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից, սեփականություն հանդիսացող բաժնետոմսերի գինը սահմանվել է 100 հազար ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Ըստ կառավարության հաշվարկների, «Դվինի» պարտքը կազմում է 13 մլն ԱՄՆ դոլար:

Կառավարությունը որոշել է նաեւ «Այրարատ» կինոթատրոն» պետական ՓԲԸ-ի բաժնետոմսերը ուղղակի վաճառքի ձեւով մասնավորեցնել վարձակալ «Նարեկ» ՍՊԸ-ին այն վերակազմակերպելով «Այրարատ» կինոթատրոն» ՓԲԸ-ի: Մասնավորեցման այս մասին որոշումն ընդունվել է կառավարության մարտի 11-ի նիստում: Մասնավորեցվող պետական բաժնետոմսերի գինը սահմանվել է 500 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Վճիռը՝ հօգուտ Գրողների միության

Արաբկիր-Զեյթուն-Քանաթեռ առաջին ատյանի դատարանում երեկ կրկին լսվեց ՀԳՄ հայցը ընդդեմ Արաբկիրի թաղապետարանի Գրողների միության պոլիկլինիկայի սեփականաշնորհման հարցով: Դատարանը չեղյալ հայտարարեց Արաբկիրի թաղապետարանի հունվարի 8-ի աճուրդով կատարված պոլիկլինիկայի աճուրդը եւ վաճառքը: Ըստ ՀՀ սեփականաշնորհման օրենքի 18-րդ հոդվածի, պոլիկլինիկան կդրվի ազատ աճուրդի, եւ, ըստ ընդունված կարգի, վաճառքի նախապատվությունը կտրվի Հայաստանի գրողների միությանը, որի հաշվեկշռի մեջ դեռ 1967 թ. գրանցված է հիշյալ բժշկական հաստատությունը:

Մ. Ը.

ՀԱՅԱՍՏԱՆ

Հեղեղների պատճառած վնասն աննախադեպ է

Երեկ կառավարությունը պահուստային ֆոնդից 510 մլն դրամ է հատկացրել հեղեղների վնասների վերացման անհետաձգելի միջոցառումների անցկացման համար: Այդ մասին լրագրողներին հայտնեց տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքները համակարգող նախարար Հովիկ Աբրահամյանը: Սակայն վնասի վերջնական չափը դեռեւս հաշվարկված չէ: Այդ նպատակով մարզերում եւ համայնքներում ստեղծվել են հանձնաժողովներ:

Դատելով այն հանգամանքից, որ նախորդ տարվա հեղեղումների պատճառած վնասը կազմել է 15 մլրդ դրամ, իսկ այս տարվանը, նախարարի հավաստմամբ, աննախադեպ է վերջին 15-20 տարիների համար, ապա հասկանալի է դառնում, որ այս տարվա վնասը շատ ավելին է: Հովիկ Աբրահամյանը հայտնեց, որ ընդհանուր վնասի չափը ճշտելուց հետո Հայաստանի կառավարությունը կդիմի միջազգային ֆինանսական կազմակերպություններին եւ տարբեր երկրներին օժանդակության ակնկալիքով: Իսկ կառավարության հատկացրած գումարը ըստ մարզերի բաժանվել է հետեւյալ կերպ. Վայոց Ձոր՝ 7 մլն դրամ, Արագածոտն՝ 58 մլն, Սյունիք՝ 11 մլն, Արմավիր՝ 3 մլն, Տավուշ՝ 71 մլն, Կոտայք՝ 12 մլն, Գեղարքունիք՝ 15 մլն, Արարատ՝ 30 մլն, Շիրակ՝ 6 մլն դրամ: Այս գումարները հիմնականում ուղղվելու են անօթեւան մնացած ընտանիքներին տուն գնելու, դպրոցների, հասարակական այլ շինությունների նորոգման նպատակով: Բացի այդ, Ջրային տնտեսության պետական կոմիտեին հատկացված գումարի չափը կազմել է 69 մլն դրամ, որն ուղղվելու է ջրամատակարարման համակարգի վնասները վերացնելուն, իսկ գյուղատնտեսության նախարարությանը՝ 200 մլն դրամ, սերմացուի ձեռքբերման եւ հեղեղատարների կառուցման նպատակով:

Վնասված ցանքատարածությունների ընդհանուր տարածքը կազմել է 2500 հա: Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքները համակարգող նախարարը ընդգծեց ջրամատակարար կազմակերպությունների դրական աշխատանքը, որի շնորհիվ հնարավոր եղավ խուսափել ջրի թունավորումներից: Իսկ հոսանքալարերը վերանորոգել է բաշխիչ ցանցերի սեփականատեր ընկերությունը:

Ա. Մ.

Հարյուրավոր զոհեր եւ հազարավոր վիրավորներ Մադրիդի գնացքներում

Իսպանիայում կայանալիք խորհրդարանական ընտրություններից ընդամենը 3 օր առաջ երեկ առավոտյան մայրաքաղաք Մադրիդի գնացքներում որոտացել են մի շարք պայթյուններ: Երթեւեկության լարված ժամին Մադրիդում պայթեցվել են Ատոչա կայարանում գտնվող ճեղքնթացը եւ մերձքաղաքային երկու գնացքներ, որոնք մայրաքաղաքի մատույցներում էին: Սանտա Էուխենիա եւ էլ Պոսո Դել Տիո Ռայմունդո կայարանների մոտակայքում:

Երկու ժամ անց CNN հեռուստաընկերությունը հաղորդեց Ատոչա կայարանի շրջանում տեղի ունեցած նոր պայթյունի մասին:

Չորրորդ այդ պայթյունի փաստը հաստատեց նաեւ Իսպանիայի ներքին գործերի նախարարը: CNN-ի թղթակիցը պատմեց, որ դեպքի վայրում նոր պայթյուններից ընդամենը մի քանի վայրկյան առաջ հայտնված ոստիկանները եւ փրկարարները սկսել են այնտեղից հեռացնել ուղեւորներին:

Պայթյունների հետեւանքով տուժածների թիվն ուշ երեկոյան հասել էր 192-ի, վիրավորների թիվն անցնում էր 1400-ից: Երկրում հայտարարվել է եռօրյա սուգ, դադարեցվել է ընտրարշավը:

Իշխանությունները երեկվա ահաբեկչությունների համար մեղադրում են բասկ անջատականների ԷՏԱ կազմակերպությանը: Սակայն մեկնաբաններից շատերը նշում են, որ բասկերը ոստիկանությանը սովորաբար նախազգուշացնում են ծեռնարկվելիք ահաբեկչությունների, երբեմն նույնիսկ դրանց վայրի մասին: Իսկ երեկվա պայթյուններից առաջ անանուն հեռախոսազանգեր կամ գրավոր նախազգուշացումներ չեն եղել:

Չի բացառվում նաեւ «Ալ Ղաիդայի» վարկածը, մանավանդ որ ուշ գիշեր պայթյունների պատասխանատվությունը ստանձնել է «Ալ Ղաիդային» հարող մի խմբակ:

Սա առավել արյունալի ահաբեկչությունն է Իսպանիայի պատմության մեջ: Մինչեւ օրս կատարված ահաբեկչությունների մեջ տխուր ռեկորդը սահմանվել էր 1987 թ.: Այն ժամանակ Բարսելոնի հանրախանութներից մեկում ԷՏԱ-ի զոհայինների կազմակերպած պայթեցման հետեւանքով 21 մարդ էր զոհվել:

Պ. Ռ.

ԸՆԹԱՑԻԿ

Նրանց՝ ովքեր մտահոգ են երկրի եւ ժողովրդի ճակատագրով

Որ իշխանափոխության անհրաժեշտությունն այսօր Հայաստանում հասունացած երեւույթ է, մտավորականության երեկվա ֆորումում թե հաղթական ներկա ուժերից, թե հավաքված մտավորականներից որեւէ մեկը չէր տարակուսում: Խնդիրն այն է, թե ինչպես եւ ինչ մեթոդներով կարելի է դա իրականացնել: Մտավորականության կազմկոմիտեի (ավագանու) անունից խորեն Պալյանը հնչեցրեց հավաքի երկու գլխավոր հարցադրումները. ինչպե՞ս են տեսնում Հայաստանի ապագան եւ կոնկրետ ի՞նչ ծրագրեր են առաջարկում քաղաքական այն ուժերը, որոնք մտահոգ են երկրի ու ժողովրդի ճակատագրով:

Միանգամից նկատենք, որ Հայաստանի ապագան կասկածի տակ դնելն անհեթեթություն համարվեց հենց թեկուզ ուսանողության վերջին ընդվզումների փաստով:

Ֆորումի կողմից ներածական իր խոսքում ճարտարագիտական համալսարանի պրոֆեսոր Արմեն Սարգսյանը հավաստեց, որ Հայաստանն այսօր գտնվում է այնպիսի փոփոխական իրավիճակներում, որոնք կարող են անվերահսկելի լինել: Հայաստանյան ներկա կացության (տնտեսության, կրթական, գիտական, առողջապահական, մշակութային) անմխիթար, երբեմն հուսահատություն ծնող վիճակը նմանեցրեց Սեւակի խոսքերով հանճարեղ հոգնության, որից ծնվում են նրանք, ովքեր «վերջը սկիզբ են դարձնում»: «Այսօր Հայաստանը երկունքի ցավերի մեջ է, իսկ կարո՞ղ ենք արդյոք անցավ երկունք ունենալ», սա է պահի գերխնդիրը: Հայաստանյան վերջին տարիների հերթագայող «հակաժողովրդական իշխանությունների» գոյության փաստը նա համարեց պատմականորեն անխուսափելի (տեսակետ, որին համաձայն չէր հաջորդ բանախոս Վազգեն Մանուկյանը) մեր ներին քաղաքական փորձի (ինքնամարում ներին ճակատում, պայքար ազգային ցեցերի դեմ) բացակայության պատճառով:

Բանախոսը հստակ ընդգծեց, որ եթե այսօրվա իրավիճակից դուրս գալու իշխանափոխության ճանապարհից բացի այլ ելքեր կան, մտավորականությունը հոժարակամ կընդառաջի, հատկապես որ հզոր ցնցումներ այսօր Հայաստանին պետք չեն: Սակայն դրանք բացակայում են, իսկ իշխանափոխությունն ինքնանպատակ չի լինելու: Ովքե՞ր են եւ ի՞նչ ծրագրով են գալու նորերը: Սա ելս օրվա գերխնդիրն է: Ընդ որում վճռական համարվեց քաղաքական ուժերի պահվածքի անկեղծությունը:

«Հանրապետություն» կուսակցության նախագահ Ալբերտ Բազեյանի խոսքն ընդմիջվեց Օհան Դուրյանի մուտքով, եւ դահլիճը հոտնկայս ծափողջույններով դիմավորեց մաեստրոյին: Իր կարճ ելույթում Օհան Դուրյանը բոլորին գործի անցնելու կոչեց եւ մաղթեց լինել զինվոր, ոչ գեներալ:

Ինչպե՞ս են պատկերացնում վերոհիշյալ հարցադրումների պատասխանները հավաքին ներկա քաղաքական ուժերը: Պրն Բազեյանը երկրի ներքին կայունության անհրաժեշտությունը բնավ չվիճարկեց: Սակայն նկատեց, թե այդ ինչպե՞ս է պատահում, որ Հայաստանում հաճախ առկա են լինում ապակայունացման վտանգներ եւ ամենահիմնական պատճառը անցած տարվա ընտրությունների կեղծումը համարեց: Ըստ նրա, կա երկու ճանապարհ հանուն կայունության հարմարվել ներկա վիճակին, հասնել հերթական ընտրություններին, երբ իշխանությունները կրկին կվերարտադրվեն, եւ Հայաստանում ոչինչ չի փոխվի:

Եվ երկրորդը հնարավորինս կարճ ժամանակում գնալ իշխանափոխության: Բայց քանի որ առաջիկայում սահմանադրորեն չկա ընտրության հնարավորություն, ապա հնարավոր է ներքին հեղաշրջման կամ դրսի միջամտության փորձեր: Մերժելով այս երկու տարբերակները՝ պրն Բազեյանը տվյալ պարագայում միակ ճանապարհը ժողովրդական հզոր ալիքի բարձրացումը համարեց: Իշխանափոխությանը հաջորդող ժամանակահատվածում ստեղծված այլընտրանքային կենտրոնը կհամագործակցի առաջադրված բոլոր թեկնածուների հետ, որոնք հավասար պայմաններում կմտնեն այդ դաշտ՝ մասնակցելով ընտրապայքարին:

Գրեթե նույն առաջարկով հանդես եկավ նաեւ ԱԺՄ նախագահ Վազգեն Մանուկյանը՝ իշխանափոխություն իրականացնել միասնական համաժողովրդական շարժման միջոցով՝ նվազագույն ցնցումներով: Վ. Մանուկյանն անհաս լիդերի անհրաժեշտություն տվյալ փուլում չտեսավ, դրա փոխարեն առաջարկեց ստեղծել լիդերական խումբ: Մոտակա երկու տարում սահմանադրության, ընտրական օրենքի, պետական կառուցվածքի փոփոխություններով հնարավոր է Հայաստանը դնել զարգացման իսկապես ժողովրդավարական ուղու վրա:

Գրեթե նույն տեսակետներն ունեին մյուս բանախոսները՝ ժողովրդական կուսակցության նախագահ Տիգրան Կարապետյանը (որը դեմ էր ստերեոտիպով կոմիտեի ստեղծմանը, գտնելով, որ այնտեղ պետք է մտնեն իրենց անունը չարաշահած մարդիկ), ՍԻՄ նախագահ Հրանտ Խաչատրյանը (նա գտնում էր, որ իշխանափոխության երկրորդ փուլում հայտնի ուժերին միանալու են նաեւ կոալիցիայի ուժերը, որտեղ որոշակի վերապահում կա անելու), ԱԺ նախագահ Արշակ Սադոյանն իր հստակ առաջարկներով, «Հայրենիք եւ պատիվ» կուսակցության փոխնախագահ Լեւոն Գալստյանը, ակադեմիկոս Ռաֆայել Ղազարյանը (որն իշխանափոխության անարյուն անցումի համար կոչ արեց ավանդական կուսակցություններին հարգել իրենց անցյալը եւ կենսագրությունը եւ ժողովրդի՝ կողքին լինել), գեներալ Էդվարդ Սիմոնյանցը (նա հավաստեց, որ ավագանին առավելագույն հնարավորություն կտա մեկ ընդհանրության մեջ միավորելու եւ կոորդինացնելու բոլոր նրանց, ովքեր մտահոգ են եւ ցավում են երկրի համար): Դահլիճն ակնհայտորեն գեւորությամբ դիմավորեց ԵՊՀ ասոցիրանտ Հովհաննես Հովհաննիսյանի խոսքը, թե իրենք որեւէ քաղաքական ուժի չեն պատկանում, այլ միայն հայրենիքին:

Իսկ ՀԼՄ-ներին ուղղված դիտողությունը, որքանով որ ընդունելի է (կարճ ներկայությամբ ոչ ամբողջական, երբեմն էլ աղավաղված տեղեկատվություն տալու առումով), սակայն եւ անիրավացի, քանի որ երեկոյան ժամերին նման տեւողությամբ միջոցառումների հաջորդ օրվա մեկնաբանությունն այլ բան չի ենթադրում զուտ ֆիզիկական հնարավորությունից ելնելով:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԳԱԼՅԱՆ

Համաձայնագիրը կնպաստի Հայաստանի ինտեգրմանը Եվրոպային

Հայաստանի եւ Եվրամիության կնքած գործընկերության եւ համագործակցության համաձայնագրի (ԳՀՀ) մանրամասների լուսաբանմանն էր նվիրված երեկ Թեքեյան կենտրոնում AEPLAC-ի (Տնտեսական քաղաքականության եւ իրավական խորհրդատվության հայ-եվրոպական կենտրոն) նախաձեռնած շնորհանդեսը:

Առաջինը ելույթ ունեցավ կազմակերպության եվրոպական տնօրեն Քենեթ Սյունտերը, նշելով, որ շնորհանդեսի նպատակն է ավելի տեսանելի դարձնել Հայաստանի եւ ԵՄ կապերը:

ԳՀՀ-ն ստորագրվել է 1996 թ.-ին, իսկ ուժի մեջ է մտել 1999 թ.-ին: Այն անդրադառնում է կյանքի բոլոր բնագավառներին: Այդ համաձայնագիրն առավել հանգամանորեն ներկայացրեց Հայաստանում եւ Վրաստանում Եվրահանձնաժողովի ներկայացուցիչ Ժակ Վանդոմը: Նա նշեց, որ համաձայնագրի նպատակն է օժանդակել գործընկեր պետությունների ինքնիշխանության, ժողովրդավարության ամրապնդմանը, նպաստել նրանց տնտեսական աճին, համագործակցել կյանքի բոլոր ոլորտներում, բացի պաշտպանությունից:

Հայաստանի արտգործնախարարության ներկայացուցիչ Սամվել Մկրտչյանը, ներկայացնելով գործընկերության եւ համագործակցության համաձայնագիրը, չափից ավելի հանգամանորեն անդրադարձավ այն ոլորտներին, որտեղ Հայաստանն ու Եվրամիությունը համատեղ ծրագրեր են իրականացնում: Իր ելույթը նա եզրափակեց ասելով, որ համաձայնագիրը շահավետ է Հայաստանի համար եւ նպաստում է մեր երկրի ինտեգրմանը Եվրոպային:

AEPLAC-ի իրավաբանական ծառայության ղեկավար Վարուժան Ավետիսյանը նախ նշեց, որ համանման պայմանագրեր ԵՄ-ն կնքել է ԱՊՀ 11 պետությունների հետ եւ ներկայացրեց, թե ինչպես են դրանք գործում այդ երկրներում: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա այստեղ համաձայնագրի իրականացման համար, ըստ կազմակերպության իրավաբանական ծառայության ղեկավարի, անհրաժեշտ են մի շարք քայլեր: Դրանք են՝ համաձայնագրի իրականացման ազգային ծրագրի, ազգային ծրագրի նպատակների, ծրագրի շրջանակներում իրականացվելիք միջոցառումների մշակում, ծրագրի մոնիտորինգի սահմանում, ազգային ծրագրի իրականացման կառուցվածքի մշակում: Նշված հարցերում AEPLAC-ը Հայաստանի կառավարությանը պատրաստ է առաջարկել տեխնիկական աջակցություն:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ի ԼՈՒՐ ՇԱՔԱՐԱԽՏՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ

«Լիլի» ֆիրման այսօր ինսուլին կհասցնի Երեւան

Վերջին տարիներին, որպես կանոն, տարեսկզբին կամ տարվա մեջ գոնե մի անգամ ինսուլինային լարվածություն, կամ ավելի իրական բնորոշմամբ, ճգնաժամ է առաջանում: Ինչպես անցած տարեսկզբին, այս տարի էլ շաքարախտով հիվանդ հազարավոր մարդիկ ապրեցին տագնապի ու նյարդայնության սարսափելի օրեր:

ՀՀ առողջապահության նախարարի խորհրդական Ռուսլանա Գեւորգյանից տեղեկացանք, որ այսօր ինսուլին գնող «Լիլի» ֆիրման 8200 սրվակ ինսուլին կհասցնի Երեւան: Դեղորայքի այդ խանակը մեր պետությանը տրամադրվելու է անվճար, իբրեւ մարդասիրական օգնություն: Սա յուրօրինակ փոխհատուցում է մեղադ այն իմաստով, որ նախորդ անգամ ֆիրման անհրաժեշտից պակաս խանակ՝ 5000 սրվակ բերեց Հայաստան: Նոր խմբաքանակը կօգտագործվի նաեւ իբրեւ պահուստային պաշար՝ ինսուլինի պակասի դեպքում: Համենայն դեպս, այս պահին հանրապետության բուժհաստատությունները ապահովված են ինսուլինով: Այն հիվանդներին հնարավորինս շուտ հասցնելու ծգծգումներից խուսափելու համար որոշվել է բաշխման նոր մեխանիզմ գործարկել. ինսուլինը ուղղակի բաժանել պոլիկլինիկաներին, ոչ թե մարզպետարաններին: Այսօր մարզեր կառավարվեն ինսուլինի խմբաքանակները:

Այս տարի մեր պետությունն դեղորայքի կենտրոնացված գնումների համար նախատեսել է 898 մլն 600 հազար դրամ, որից 387 մլն 661 հազարը տրամադրվելու է ինսուլինի գնումներին: Այս տարվա մեծ նորությունը շաքարախտով հիվանդների համար այն է, որ կառավարական հատուկ որոշմամբ հանրապետությունում ներկրվելու է բացառապես մարդկային տեսակի ինսուլին: «Սա կառավարության կողմից չափազանց առաջադեմ քայլ էր. կենդանական ծագման ինսուլինը որոշակիորեն ազդում է հիվանդների առողջության վրա՝ անպայման կողմնակի բարդություններ ու հիվանդություններ առաջացնելով, ինչպես օրինակ, փչախտը», ասում է Ռուսլանա Գեւորգյանը:

Տարակուսելի է, բայց փաստ, որ գումար ժամանակին չլինելու պատճառով պետությունը ժամանակին դիմել է տնտեսման այս հանցավոր միջոցին՝ ուղղակիորեն հարվածելով սեփական քաղաքացիների առողջությանը:

Հանրապետությունում շաքարախտով հիվանդները, գոնե գրանցվածները, այնքան էլ շատ չեն: Տարբեր աղբյուրների հաշվարկներով՝ 16-ից 20, 30 հազար: Այդ մարդկանց առողջությունը հնարավորինս ապահովագրելու համար ի սկզբանե պետք էր հանգել նման որոշման: Առանց այդ էլ շաքարախտը գրեթե անխուսափելիորեն բարդություններ ունենում է:

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՌԵՆԵՑԱՆ

Ժամկետանց դեղորայքը կարելի է այրել դոմնային վառարաններում

Հայտնի է, թե ինչպիսի գլխացավանք է դարձել ժամկետանց դեղորայքի խոտանումը առողջապահների ու էկոլոգների համար: Հանրապետությունում այսօր կուսակվել է 140 տոննայից ավելի դեղորայք՝ բոլոր մարզերի եւ Երեւանի հիվանդանոցներում ու պոլիկլինիկաներում: Դրանք այնպես պետք է ոչնչացնել, որ ոչ բնությանը, ոչ բնակչությանը չվնասեն: Տարիներ այդպես էլ խելամիտ տարբերակ չգտնվեց: Լոռու մարզ առողջապահության նախարարի այցելության ժամանակ մարզպետն առաջարկել է դեղորայքից ազատվելու հետաքրքրական տարբերակ՝ ամբողջությամբ այրել Ալավերդու դոմնային վառարաններում: Սակայն առողջապահական հաստատությունները թափոններից ազատագրելու այս միջոցն էլ, առողջապահության նախարարության բժշկական օգնության կազմակերպման վարչության պետ Վահան Պողոսյանի ասելով, դեռեւս ճնշարկման ենթակա է եւ կիրակացվի էկոլոգներից ու բժիշկներից կազմված հատուկ հանձնաժողովի հավանությունից հետո:

Կ. Դ.

«Ավստրիական ավիաուղիները» 4-րդ թռիչքն է ավելացնում դեպի Վիեննա

«Ավստրիական ավիաուղիների» երեւանյան գրասենյակից մեր ստացած մամլո հաղորդագրությունը տեղեկացնում է, որ առաջիկա ապրիլի 5-ից սկսյալ Երեւան-Վիեննա եւ հակառակ ուղղությամբ չվերթերի թիվն ավելանալու է եւս մեկով՝ դառնալով շաբաթական 4 թռիչք: Ըստ հաղորդագրության, այդ հավելման պատճառը շուկայում ստեղծված պահանջն է: Այսպիսով, Երեւանից Վիեննա ուղղությամբ «Ավստրիական ավիաուղիների» ամառային չվացուցակը կընդգրկի երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը, իսկ Վիեննայից Երեւան երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի եւ կիրակի օրերը, մեկնումը Երեւանից ժ. 05:40-ին, Վիեննայից ժ. 22:00-ին, իսկ ժամանումը Երեւան ժ. 04:45-ին, իսկ Վիեննա ժ. 08:20-ին: Բոլոր թռիչքներն իրականացվում են «Էրբաս» A 320 տիպի ինքնաթիռներով:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության 69 տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաղ.՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊՈՂՈՍ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լուսագրողների սենյակ
/ հեռ. 581841
Համակարգչային ծառայություն
/ հեռ. 582483
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ»-ի թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տոյգիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ՝ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, հետեւ ենթարկւում են հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

Աղցուդարձ

Գեղամյանը հերքում է, պահանջում, զգուշացնում

Ունկնդիրներն այս անգամ ուսանողներն էին

Ոչ երկրի քաղաքական գործիչներն արդեն ավանդույթ են դարձրել ուսանողության հետ հանդիպումների միջոցով իրենց հուզող խնդիրների մասին խոսելու, քաղաքական հայտարարություններ անելու ճանապարհը: Երեկ «Ազգային միաբանության» առաջնորդ Արտաշես Գեղամյանն էր բուհերի երիտասարդությանը հանդիպման հրավիրել: Ու թեև Գեղամյանի մասնագիտությամբ մանկավարժ կինը զգուշացրել էր, թե ուսանողների առջև 45 րոպեից ավելի ելույթ ունենալն իմաստ չունի, բանախոսի ելույթը տևեց ուղիղ 52 րոպե: «Ազգային միաբանության» առաջնորդի կինը սխալվել էր. երիտասարդները Գեղամյանին լսում էին մեծ ուշադրությամբ, հաճախ նրա ելույթն ընդհատում ծափահարություններով, թեկուզ երբեմն անտեղի: Հանդիպումը մանրամասն էր կազմակերպված: Կինոյի տան դահլիճը լեփ-լեցուն էր, դահլիճում չտեղավորված ուսանողներն «ԱՄ» ղեկավարին ունկնդրում էին նախասրահում տեղադրված բարձրախոսների օգնությամբ:

Ուսանողների մասնակցությունը հանդիպմանը, թերևս, միայն ծափահարություններով էր պայմանավորված, քանի որ Գեղամյանին ուղղված որևէ հարց այդպես էլ չհնչեց: Տեղեկացրին միայն, որ ելույթի համար մոտ 30 ուսանող է հերթագրվել, գրավոր բազմաթիվ հարցեր են ստացվել, որոնց զգալի մասին, փաստորեն, «ԱՄ» ղեկավարն իր ելույթում անդրադարձել էր: Մնում է միայն ենթադրել, որ հարցերը վերաբերում էին հիմնականում նախորդ օրը հանրաքվեության նախագահի ԵՊՀ-ում տեղի ունեցած հանդիպմանը, եւ մեր երկրին առաջիկա տարիներին նեցվելիք մարտահրավերներին: «Ես այս հանդիպմանը եկել եմ զինված, բայց ոչ թե հիլերներով, այլ գրքերով», հայտարարեց Գեղամյանը: Իսկ գրքերը բերվել էին ապացուցելու, որ Ռոբերտ Քոչարյանի պետհամալսարանում ասածը հեռու է իրականությունից: Մեջբերելով բրիտանական հանրագիտարանի նախորդ տարվա ժողովածուի 231-րդ էջում ներկայացված տվյալները, Գեղամյանը տեղեկացրեց, որ Հայաստանը 220 երկրների ցանկում թերսնվածությամբ զբաղեցնում է 217-րդ տեղը: Այսինքն հայաստանցիների գերակշիռ մասը թերսնված է, եզրակացնում է Արտաշես Գեղամյանը, մինչդեռ երկրի նախագահը խոսում է տնտեսական աճի մասին: Այուս տվյալները, որ նշում է «ԱՄ» առաջնորդը, երկրում սուր աղիքային հիվանդությունների 2,7 անգամ, հեպատիտի 2 անգամ, գրիպի 7 անգամ աճն է: Այս թվերը նշելով, Գեղամյանը փաստում է, թե սա է իրականում կյանքի որակի բարձրացումը:

«Ես զգուշացրել էի, չէ՞, որ կեղծ թվեր մի հրապարակեք, թե չէ սփիռված եմ լինելու հերթել»: Այս խոսքերին բանախոսը հավելում է նաեւ նոր թվեր: Ըստ նրա, Հայաստանում 1998-ի համեմատ աշխատատեղերը ոչ թե ավելացել են, այլ կրճատվել 200 հազարով:

Արտաշես Գեղամյանն անդրադարձավ նաեւ ղարաբաղյան խնդրի կարգավորմանը եւ այն մարտահրավերներին, որոնք նեցվելու են Հայաստանին Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղի եւ Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազամուղի կառուցման դեպքում: Մեր տարածաշրջանում Ադրբեջանի դերի բարձրացումը խոշոր այս տնտեսական ծրագրերի հաշվին ուղղակի սպառնալիք է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության եւ Հայաստանի համար: Անդրադառնալով մեր մյուս հարեւանին Վրաստանին, Գեղամյանը նշեց, որ նավթի եւ գազի տարանցումից այս երկրի բյուջեն տարեկան շուրջ 1 մլրդ դոլարի եկամուտ է ստանալու, ինչն, իհարկե, ոչ Վրաստանի ղեկավարության կամքով, կարող է պատճառ դառնալ, որ Հայաստանի համար տարանցման գները մի քանի անգամ աճեն, այսինքն մեր երկիրը հայտնվի ամբողջական շրջափակման մեջ: Այս մասին խոսելով՝ «ԱՄ» ղեկավարը Հայաստանի իշխանություններին կոչ է անում վարել հեռատես արտաքին քաղաքականություն:

Ելույթից հետո Գեղամյանը եկավ արդեն ավանդական դարձած եզրահանգման՝ նորից պահանջելով Ռոբերտ Քոչարյանի հրաժարականն ու վստահության հանրաքվեի անցկացումը:

«Ազգային միաբանությունում» տեղի ունեցող խմորումների մասին Արտաշես Գեղամյանը գերադասեց ամբիոնից չխոսել: Հիշեցնենք, որ Հմայակ Հովհաննիսյանը լքել է կուսակցության շարքերը եւ հայտարարել, թե պատճառը «Ազգային միաբանություն»-«Օրինաց երկիր» քաղաքական մերձեցմանը չխոչընդոտելու մղումն է: Լրագրողները փորձեցին պարզել Գեղամյանի վերաբերմունքը նախկին կուսակցականի հայտարարության վերաբերյալ: Պարզվում է, որ Արտաշես Գեղամյանը դրան հումորով է վերաբերվում եւ մեկ անգամ շրջանցելով այս թեման եւ խուսափելով նշել Հմայակ Հովհաննիսյանի հեռանալու մասին իր կարծիքը:

Հ. Մ.

Մասնավորեցման ծրագիրը չընդունվեց

Մարտի 10-ին տեղի է ունեցել ԼՂՀ խորհրդարանի հերթական լիագումար նիստը:

Իբրեւ օրակարգային առաջին հարց նախ լսվեց ԼՂՀ գլխավոր դատախազ Մավրիկ Ղուկասյանի հաղորդումը հանրապետության դատախազության մարմինների 2003 թ. գործունեության մասին: Այնուհետեւ պատգամավորները ծեռնամուխ եղան օրինագծերի քննարկմանը:

«Պետական տուրքի մասին» օրենքի նախագիծը պատգամավորների ուշադրությանը ներկայացրեց Ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարար Սպարտակ Թեւոսյանը: Նախագծի նոր խմբագրությամբ մշակումը, ըստ կառավարության լիազոր ներկայացուցչի, պայմանավորված է գործող օրենքում մի շարք փոփոխությունների եւ լրացումների առկայությամբ, ինչը դժվարացնում է նրա կիրառումը գանձուրդներն իրականացնողների եւ վճարողների կողմից, ինչպես նաեւ այլ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու անհրաժեշտությամբ: Քանի որ օրինագծի վերաբերյալ կային նոր առաջարկություններ, որոնք լրացուցիչ քննարկման անհրաժեշտություն ունեին, ուստի խորհրդարանն օրենքն ընդունեց առաջին ընթերցմամբ:

Վերջնական տեսքով ընդունվեց «Լիցենզավորման մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքը:

«Պետական գույքի մասնավորեցման 2004-2006 թվականների ծրագրի մասին» օրենքի նախագիծը տարակարծությունների տեղիք տվեց: Թեպետ գլխադասային՝ ֆինանսաբյուջետային եւ տնտեսական կառավարման հարցերի մշտական հանձնաժողովի եզրակացությունը դրական էր, այնուհանդերձ, օրինագծին դեմ քվեարկեց ՀՅԴ խմբակցությունը: Ձայների անհրաժեշտ քանակ չհավաքվեց:

Պատգամավորները հավանություն տալով «Քաղաքացիական պաշտպանության մասին» եւ «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքների նախագծերին, դրանք ընդունեցին օրենքի տեսքով:

Առարկություններ չհարուցեցին նաեւ «Հրապարակային սակարկությունների մասին» եւ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքները:

Խորհրդարանը քննության առավ «Կառավարության մասին» օրենքի նախագծի կառավարության ներկայացրած տարբերակը: Մեկ այլ տարբերակ էլ ներկայացրել էր պատգամավոր Էդուարդ Աղաբեկյանը: Վերջինս այդ եւ դարձյալ իր իսկ հեղինակած «Ազգային ժողովի կանոնակարգ» օրինագծերը իր ցանկությամբ հանել էր օրակարգից: Հաշվի առնելով նիստում հնչած, ինչպես նաեւ ակնկալվող առաջարկություններին անդրադառնալու անհրաժեշտությունը, ինչին համամիտ էր նաեւ կառավարության լիազոր ներկայացուցիչը, օրենքն ընդունվեց առաջին ընթերցմամբ:

Հետագա լրամշակման նպատակով առաջին ընթերցմամբ ընդունվեց նաեւ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքը:

Վերջում պատգամավորները հանդես եկան հայտարարություններով:

ԳԵՎՈՐԳ ԱԲԲԻԹԵԼՅԱՆ,
Ստեփանակերտ

ՀԺԿ շարքերի նստարանում

Կուսակցությունը լքելու նոր շեմ

Հայաստանի ժողովրդական կուսակցության նպատակն է հայոց անկախ պետականության ամրապնդումը, Հայաստանում ժողովրդի իշխանության հաստատումն ու հասարակության պահանջների բավարարմանը նպաստակամետ ազգային տնտեսության եւ մշակույթի հարատեւ զարգացումը: Կուսակցության ծրագրում ամրագրված այս նպատակներից հեռանալու, հասարակությանը պառակտելու եւ գաղափարական հենքը խեղաթյուրելու մեջ մեղադրելով ՀԺԿ ներկայիս առաջին դեմքերին, կուսակցության Արմավիրի մասնաճյուղում որոշակի դեր ստանձնած Արգիս Հարությունյանը երեկ հրավիրած ասուլիսում հայտարարեց ՀԺԿ-ից իր եւ շատերի հեռանալու մասին: ՀԺԿ-ն լքելը շարունակական գործընթաց համարելով Արգիս Հարությունյանը խնդրեց կուսակցությունից հեռացած 2 տասնյակ անձանց թիվը վերջնական չհամարել որպես հիմք վկայակոչելով կուսակցության Արմավիրի մասնաճյուղում տեղ գտած ակնհայտ բացասական զարգացումները:

Բանախոսի հավաստմամբ, շատ դժվար է կուսակցության ակունքներում եւ երջանկահիշատակ Կարեն Դեմիրճյանի կողքին գտնված մարդուն, այսինքն՝ իր համար միանգամից մոռանալ ՀԺԿ-ի կայացման գործում ներդրած 5 տարվա սեփական ջանքերն ու նպատակամղված գործունեությունը եւ լքել կուսակցությունը: Սակայն՝ ինքը երկար լռությունից հետո պարտավորված է համարում ՀԺԿ-ի առաջատար դեմքերին սթափեցնելու համար գնալ այդ քայլին՝ եւս մեկ անգամ հիշեցնելով, որ կուսակցության գաղափարական հենքը հասարակության համախմբումն ու պետականության ամրապնդումն է եւ ոչ հակառակը:

Իսկ մինչ այժմ կուսակցությունից իր հեռանալու մասին գրավոր դիմում չներկայացնելը Արգիս Հարությունյանը բացատրեց նրանով, որ ինքը ՀԺԿ-ի հիմնադիրներից է՝ եւ պարտավորվածություն չունի՝ իր հեռանալու մասին որեւէ մեկին դիմում ներկայացնելու:

Իսկ այսուհետեւ ՀԺԿ-ն լքած անձինք մտադիր են հանդես գալ Հայաստանի առաջադիմական կուսակցության շարքերում, քանի որ, բանախոսի հավաստմամբ, արդեն երկար ժամանակ շփումներ են եղել նշված կուսակցության հետ եւ ձեռք են բերվել որոշակի պայմանավորվածություններ: Գաղափարական հենքից շեղումներ թույլ տված ՀԺԿ վերադառնալու մասին հարցը ժամանակավրեպ համարելով Ս. Հարությունյանը փաստեց, որ իրենք պատրաստ են համագործակցել բոլոր քաղաքական ուժերի հետ՝ նաեւ ՀԺԿ-ի: Սակայն առայժմ ոչ մի կերպ չեն կարող համակարծիք լինել ՀԺԿ-ի եւ ընդհանրապես ընդդիմության հետ, քանի որ դասաղարտում են նշված ուժերի հասարակությանը պառակտելուն եւ պետականությունը խարխլելուն ուղղված գործունեությունը:

Մինչդեռ ՀԺԿ մամուլի ծառայությունից տեղեկացանք, որ Արգիս Հարությունյանը կուսակցության ծրագրերին չհամապատասխանող պահվածի պատճառով 2003 թ. մայիսին, այսինքն խորհրդարանական ընտրությունների ժամանակահատվածում հեռացվել է կուսակցությունից, եւ կուսակցությունից հեռանալու նրա հայտարարությունն առնվազն ժամանակավրեպ է: Իսկ որեւէ մեկի կուսակցությունից հեռանալը մամուլի գրասենյակում գնահատվեց որպես բնական գործընթաց յուրաքանչյուր կուսակցության համար:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Դատական աբսուրդ կամ չընդմիջվող դատ

ՀՀ սոցիալական ապահովության պետական հիմնադրամի Վանաձորի տարածային կենտրոնի կողմից 2003 թ. օգոստոսի 28-ի հանձնարարականով ստուգումներ են անցկացվել «Մեդիա գրուպ» լրատվական հասարակական կազմակերպությունում, որի արդյունքում կազմվել է շուրջ 652 հազար դրամի ակտ՝ իբրեւ «չձեւակերպված աշխատողներ ունենալու» համար:

Կազմակերպության ներկայացուցիչները պնդում են, որ դրանք թաքնված աշխատողներ չեն, այլ՝ կամավորներ: Ըստ նրանց, «Վանաձորում հասարակական կազմակերպությունների եւ համայնքի միջեւ կապերի հզորացում» դրամաշնորհային ծրագրով (որն իրականացրել է «Մեդիա գրուպ») կամավորության հիմունքներով վարորդ, խմբագիր, լուսանկարիչ ընդգրկելն արգելված չէ: Սակայն հիմնադրամի աշխատակիցները հակառակն են պնդում. նրանց համոզմամբ, անշահախնդիր աշխատել հնարավոր չէ, հետեւաբար կամավորության մասին խոսք լինել չի կարող: «Մեդիա գրուպը» հայցով դիմել է տնտեսական դատարանի Վանաձորի նստավայր՝ բողոքելով տուգանք հիմնադրամի որոշման դեմ, եւ հայցը բավարարվել էր: ՀՀ տուգանք հիմնադրամը տնտեսական դատարանի վճիռը բողոքարկել է վճռաբեկ դատարանում, որն էլ փետրվարի 13-ին որոշել է բեկանել այն եւ գործն ուղարկել նույն դատարան՝ նոր քննության: Ինչպես տեղեկացրեց «Մեդիա գրուպի» իրավաբան Էդմոն Մարուքյանը, կազմակերպության ներկայացուցիչները ծանուցվել են, որ դատը մարտի 11-ին տեղի է ունենալու քաղաքական գործերով վերաքննիչ դատարանում ու զարմացել են. «Չէ՞ որ վերաքննիչ դատարանն այս դեպքում իրավասու չէ...»: Նախատեսվածի համաձայն, մարտի 11-ին վերաքննիչ դատարանում պետք է լսվեր դատական նիստը, սակայն դատավարության մասնակիցներին տեղեկացրին, որ իրականում «դատը նախագահողը լավ չի ծանոթացել գործին, նոր ծանոթանալով՝ հասկացել է, որ այն իր իրավասությունների տակ չէ, եւ գործն ուղարկել է տնտեսական դատարան»:

Թե ի՞նչ նոր անակնկալ է սպասում «Մեդիա գրուպին», ցույց կտա ժամանակը:

ԱՐԱԲԵՏ ԱՐԱԳԱՐՅԱՆ

Գազամատակարարման վերականգնման համար կօգտագործվեն պոլիէթիլենային խողովակներ

Երեկ «Հայռուսգազարդը» շահագրգիռ կազմակերպություններին եւ մասնագետներին հրավիրել էր ներկայացնելու գազատարների կառուցման համար պոլիէթիլենային խողովակների կիրառման հարցերը: Ներկայացնելով դրանց արդյունավետության եւ եւ հեռանկարային լինելու հանգամանքը, ընկերության ներկայացուցիչ Ֆելիքս Կարապետյանը հայտնեց, որ առաջին անգամ Հայաստանում այդ խողովակները կիրառվել են դեռեւս 1987 թ.-ին, Հոկտեմբերյանի շրջանի Լուկաշին գյուղում: Այդ գազատարը չվնասվեց 1988 թ.-ի երկրաշարժի ժամանակ եւ մինչ այժմ հաջողությամբ շահագործվում է: 1997 թ.-ին «Տասիս» ծրագրի շրջանակներում «Սնամորջեսսի-իսալգազ» կոնսորցիումը երեւանի Գաջագործների փողոցի թվով 104 բաժանորդների համար անցկացրեց նմանատիպ խողովակներ:

Երեկվա քննարկման ժամանակ նշվեց, որ պոլիէթիլենային խողովակների շահագործման երաշխիքային ժամկետներն ավելի քան 50 տարի են, իսկ պողպատյա խողովակներինը՝ մինչեւ 25 տարի: Պոլիէթիլենային խողովակներն էկոլոգիապես անվնաս են. դիմակայուն են բնահողի հիմնային եւ թթվային ազդեցությունների նկատմամբ, ունեն բարձր էլեկտրադիմադրողականություն եւ ենթակա չեն թափառող հոսանքների ազդեցությանը, առաձգական են եւ ճկուն, դրանց քաշը 5-7 անգամ թեթեւ է պողպատե խողովակներից, տնտեսապես շահավետ են եւ չեն պահանջում մեծ ներդրումներ: Գազամատակարարման վերականգնման ժամանակ պոլիէթիլենային խողովակները կանցկացվեն արդեն գոյություն ունեցող պողպատե խողովակների միջոցով, առանց վնասելու ասֆալտածածկը: Այդ տեխնոլոգիան կիրառելու նպատակով «Հայռուսգազարդը» համագործակցում է «Պոլիմերգազ» ընկերության հետ, որը գազաբաշխիչ համակարգերի եւ այլ ինժեներական հաղորդակցությունների տեխնիկական կատարելագործման միջգերատեսչական կոորդինացիոն խորհրդի աշխատանքային մարմինն է:

Ա. Մ.

Դատ

Երանց, ովքեր կոռուպցիա չեն տեսնում դատարանում եւ «լավ ուսումնասիրելուց հետո» կատարված անօրինականությունները համարում են սոսկ դատավորի չիմացության հետեւանք, առաջարկում ենք ծանոթանալ մի պարզունակ գործի, որը մարտի 3-ին կրկին լսվեց քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանում:

2000 թ. մարտի 25-ին, երբ երեւանի բնակիչ Արտավազդ Սահակյանն ընկերոջ մեքենայով անցնում էր Լոռու մարզի Ձաղիձոր-Մարց ճանապարհահատվածով, ճանապարհի եզրին գտնվող ժայռից ժայռաբեկորն ընկել էր մեքենայի վրա: Մեքենան ամբողջովին ջարդվել էր, իսկ Ա. Սահակյանի դեռահաս աղջիկը մարմնական ծանր վնասվածքներ էր ստացել: կոտրվել էր գանգոսկրը: 5 օր անգիտակից վիճակում գտնվելուց հետո, վիրահատության շնորհիվ հաջողվել էր փրկել աղջկա կյանքը: Պատահարից հետո աղջիկը կորցրել է հիշողությունը եւ այլեւս ի վիճակի չի եղել ուսումը շարունակել հանրակրթական դպրոցում:

Արտավազդ Սահակյանը Լոռու մարզպետարանի անգործության հետեւանքով պատճառված վնասը հատուցելու պահանջով դիմել էր Արաքիր եւ Քանաքեռ-Զեյթուն համայնքների առաջին ատյանի դատարան: Նշենք, որ սկզբից եւեթ դատարանը հակված չէր քննելու նրա հայցադիմումը՝ անհնարին համարելով իշխանություններից փոխհատուցում պահանջելը: Միայն մեր միջամտությունից հետո նրա հայցադիմումը վարույթ ընդունվեց եւ պահանջն ամբողջությամբ բավարարվեց: Լոռու մարզպետը, սակայն, չհաշտվեց վնասը փոխհատուցելու մտքի հետ եւ բողոքարկեց դատարանի վճիռները:

Այդուհանդերձ, մարզպետարանի ներկայացուցիչներն արդեն չորրորդ անգամ կրկնում են դատարանում, որ իրենք պատասխանատու են ճանապարհահատվածի անվտանգ երթեւեկության համար: Նույնիսկ հենապատ կառուցելու, քարերը հեռացնելու եւ այլ աշխատանքների համար նախահաշվարկ են ներկայացրել կառավարությանը, սակայն, նրանց ասելով բյուջեից այդ նպատակի համար գումարներ չհատկացվելու պատճառով չեն կատարվել նշված աշխատանքները: Եվ սա այն դեպքում, երբ դժբախտ պատահարը, ինչպես նրանք վկայեցին, եզակի չէ այդ ճանապարհին, եղել են նույնիսկ մահացու պատահարներ: Առաջին ատյանի եւ վերաքննիչ դատարանները բավարարեցին Ա. Սահակյանի պահանջը մարզպետարանին պարտավորեցրին 405 հազար դրամ վճարել հայցվորին պատճառված վնասի համար տրանսպորտի, դեղորայքի, սննդի եւ այլ ծախսերի դիմաց: Վերաքննիչ դատարանն, այնուամենայնիվ, շատ համարեց եւ մեքենային, եւ աղջնակին պատճառված վնասը փոխհատուցելը եւ իր անհիմն վճռով չբավարարեց մեքենային պատճառված վնասը:

Վճռաբեկ դատարանի քաղ. եւ տնտ. գործերի պալատը մարզպետարանի բողոքի հիման վրա կրկին քննելով գործը, բեկանեց նաեւ վերաքննիչ դատարանի վճիռը՝ աղջկա առողջությանը պատճառված վնասի փոխհատուցումը, չափազանց «հանճարեղ» մի հիմնավորումով: Դատարանը գտել է, որ վնասը ծագել է «անհաղթահարելի ուժի հետեւանքով», ուստի հայցվորը փոխհատուցում պահանջելու իրավունք չունի: Այսինքն, force majeur, որը տվյալ դեպքում կարող էր բնական աղետը լինել: Սակայն ճիշտ կլիներ, որ իր ձեւակերպման իրավաբանությունը հիմնավորելու համար դատարանը նաեւ նշեր, թե ինչ բնական աղետ է եղել դեպքի պահին՝ երկրաշարժ, ջրհեղեղ կամ այլ ինչ, որի մասին միայն քաղ. գործերի պալատն է տեղյակ եղել:

Դատավոր Տիգրան Սահակյանը, (դատավորներ Վ. Ավանեսյանի ու Գ. Մաթինյանի մասնակցությամբ) այս անգամ էլ չհիասթափեցրեց իր շրջապատին եւ ջանք չխնայեց. վերադաս դատավորից ստացած ցուցումը «անհաղթահարելի ուժի» հետեւանքները իր նոր քննությամբ մարզպետարանից հեռացնելու համար: Դատական շրջանակում շատ լավ գիտեն, որ քաղ. եւ տնտ. գործերի պալատի նման ձեւակերպումներն արդեն իսկ ցուցում են վերաքննիչ դատարանի համար, իսկ եթե բեկանելուց հետո գործի քննությունը հանձնվում է դատավոր Տիգրան Սահակյանին, ուրեմն այդ միտքն էլ պետք է ընկած լինի նրա վճռի հիմքում: Արդարադատության նախարարին ու վճռաբեկ դատարանի նախագահին առաջարկում ենք ուսումնասիրել Տ. Սահակյանի քննած գործերից մի քանիսը եւ համոզվել մեր հայտարարության մեջ: Չհամոզվելու դեպքում պատրաստ ենք երկու ատյանների համագործակցության նման օրինակներ ներկայացնել: Եթե կատարվածը կոռուպցիա է, ուրեմն դատավորը պետք է պատժվի իր անօրինականության համար, իսկ եթե այս անգամ էլ կգտնեք, որ կատարվածը դատավորի «չիմացության» հետեւանք է, ուրեմն առնվազն պետք է լուծել նրա ատեստավորման հարցը:

Սկզբից եւեթ իր հարցերով նա հայցվորին ուղղորդում էր քրեական ոլորտ՝ ջանալով խաբս տալ նրան եւ միաժամանակ անտեսել նրա ներկայացրած բոլոր փաստարկները: Առաջինը նրան չհաջողվեց, սակայն փաստարկները չգնահատեց անգամ այն դեպքում, երբ կրկին Լոռու մարզպետարանի ներկայացուցիչը դատարանում պնդեց, որ 2000 թ.-ի համար մարզպետարանը պետական բյուջեից համապատասխան գումարներ չի ստացել, ու նախատես պլանավորված եւ ճանապարհի անվտանգ երթեւեկության համար նախատես հաշվարկված աշխատանքներ, այդ թվում հենապատերի կառուցում չեն կատարվել: Փաստորեն, պատասխանողն ընդունեց, որ ճանապարհի սպասարկումը, ներառյալ հենապատի կառուցումը, Լոռու մարզպետարանի պարտականությունների մեջ է մտնում եւ պետք է հենապատեր կառուցեր, սակայն... Եթե մարզպետարանը հենապատ չէր էլ կարող կառուցել, ապա հենապատում պրոֆիլակտիկ աշխատանքներ կարող էր կատարել, ինչպես իրենք ասացին դատարանում թուլացած քարերը պետք է հանեին: ՀՀ քաղ. օր-ի 1063 հոդվածի համաձայն «վնասը ենթակա է հատուցման քաղաքացուն կամ իրավաբանական անձին պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կամ դրանց պաշտոնատար անձանց ոչ միայն պաշտոնի գործողություններով, այլեւ անգործությամբ պատճառվելու դեպքում»:

Այս օրինակով դատարանը հաստատեց, որ դատական իշխանությունը ոչ թե տարանջատված, այլ սերտաճած է իշխանության մյուս ճյուղերի հետ, տվյալ դեպքում գործադիրի: Լոռու մարզպետ Հ. Քոչինյանի ստորագրությամբ ներկայացված բողոքն արդեն այնքան պատկառազդու է, որ դատարանը չի կարող մերժել նրան: Մի պահ ուզում ենք պատկերացնել, որ մարզպետարանն է քաղաքացուց փոխհատուցում պահանջում, արդյոք դատարանը նրա աղքատությունը պատճառ կբերե՞ր պահանջը մերժելու համար:

ԱՌՈՒ ՊԵՏՐՈՍՅԱՆ,
www.hetq.am

Դատավորը ցուցում է ստացել

Վանաձորի մանկատան 115 սաներից միայն 31-ն են ծնողազուրկ

Երկրի սոցիալական ծանր վիճակը, գործազրկությունն առավել ծանր հետեւանքներ են ունենում երեխաների վրա: Լուրջ ստորաբաժանումների տեղիք է տալիս այն փաստը, որ Վանաձորի մանկատան 115 սաներից միայն 31-ն են ծնողազուրկ: Իսկ լքված երեխաների լոկ մի մասն է աղորում մանկատանը:

1997 թ. նոյեմբերին մարզկենտրոնի Տարոն-2 թաղամասի մանկապարտեզի շենքում հիմնադրվեց մանկատուն, որն ուներ 30 սան: Հաջորդ տարվա օգոստոսին նրանց թիվը հասավ 44-ի: 1998-ին «Ամոր» կազմակերպության աջակցությամբ լուծվեց շուրջօրյա ջրամատակարարման հարցը, իսկ Հայ ավետարանչական ընկերակցության միջոցներով կառուցվեց կաթսայատունը, անցկացվեցին գազատար խողովակներ: Նույն տարում ԱՄՆ-ի «Հայաստանի զարգացման ծառայություններ» կազմակերպության հովանավորությամբ նորացվեց շենքի տանիքը: 1999-ին մանկատունն ապահովված էր ջեռուցմամբ: 2001 թ. Սոցներդրումների հիմնադրամի, ինչպես նաեւ բարեգործական մի շարք կազմակերպությունների ֆինանսավորմամբ (93 հազար ԱՄՆ դոլար) շենքը վերակառուցվեց, ստեղծվեցին նորմալ պայմաններ, իսկ մանկատան սաների թիվը հասավ 105-ի:

Մանկատանը մշտական աջակցություն է ցուցաբերում Մարյանների ընտանիքը ԱՄՆ-ի Սան Ֆրանցիսկո քաղաքից: 2002-ին նրանք իրենց որդու հարսանիքի ժամանակ հանգանակված գումարով գնել եւ մանկատանն են նվիրել «Գազել» մակնիշի ավտոմեքենա:

Մանկատան սննդի եւ պահպանության ծախսերը հոգում է պետությունը, սակայն բարեգործների աջակցությամբ հնարավոր են լինում նաեւ բարեկարգման ու նորոգման աշխատանքներ: Վերջերս ավարտվեց լողասենյակների ու սանհանգույցների մի մասի վերանորոգումը: Դրանք տեղակայված են ննջասենյակներում:

Օրերս, հերթական անգամ այցելելով մանկատուն, համոզվեցի, որ երեխաները շրջապատված են ջերմությամբ ու հոգատարությամբ, գոհ են եւ դասընկերներից, եւ հանգստի կազմակերպման համար ներդրվող ջանքերից, եւ օրական 3 անգամ տրվող սննդից: Սակայն կան նաեւ հարցեր, որոնք լուծում են պահանջում:

Ինչպես տեղեկացա մանկատան տնօրեն Արշալույս Հարությունյանից, անցած տարի նախատեսված 105-ի փոխարեն մանկատունը պահել է 120 երեխայի: Այս տարի նրանք 115-ն են (56 տղա եւ 59 աղջիկ), որոնցից 4-ը նորածին, 18-ը նախադպրոցական տարիքի, 87-ը դպրոցական եւ 6-ը ուսանող: Նորածիններից 3-ին լքել են ծնողները, 1-ն ընկեցիկ է: Ուսանողները Վանաձորի պետական բժշկական քոլեջի, երաժշտական ուսումնարանի եւ գյուղտեխնիկումի սաներ են: Նրանք ՀՕՖ-ից 10 հազարական դրամ ամենամսյա նպաստ են ստանում:

Տնօրենը մտահոգված էր, որ այս տարի մանկատան սաներից 9-ը 18 տարեկան է դառնում, իսկ մեկը 19, իսկ պետության հաշվառվելիք բնակարանների մասին կոնկրետ տեղեկություն չկա: Ի՞նչ է անելու, եթե այդ գործընթացն ուշանա:

Վանաձորի մանկատան երեխաները ճամբարում

Ա. Հարությունյանը նշեց, որ երեխաներից միայն 31-ն են ծնողազուրկ (6-ը երկկողմանի): Երեխաներից 6-ի ծնողները համապատասխան ատյաններում հրաժարվել են նրանցից, մնացածներին պարզապես լքել են իրենց ընտանիքները:

Մի մասի ծնողներն ամուսնալուծված են, բացակայում են հարաբերությունից, կալանավայրերում կամ երկարատեւ բուժման մեջ են:

Մանկատան սաների 70 տոկոսը Լոռու մարզից է, մյուսները Արարատի, Արագածոտնի, Գեղարքունիքի, Տավուշի մարզերից: Քիչ չեն հենց Վանաձորում բնակվող ծնողների զավակները: Վերջիններս իրենց երեխաներին մանկատան խնամքին հանձնելը բացատրում են սոցիալական ծանր վիճակով: 15 երեխա նախկինում թափառաշրջիկ կամ մուրացկան է եղել: Կան նաեւ ՀՕՖ-ի կողմնորոշիչ կենտրոնից բերվածներ: Երեխաներից 3-ն ազգությամբ եզդի են, 7-ը ռուս, սակայն մաքուր հայերեն են խոսում եւ հայկական դպրոց հաճախում:

Տնօրենը հավաստիացրեց, որ ամեն՞ինչ արվում է սաների դաստիարակությունն ու հանգիստը ճիշտ կազմակերպելու համար: Մանկատունն ամռանը Ստեփանավանի տարածաշրջանի Գարգառ գյուղի մոտակայքում ամեն տարի ճամբար է կազմակերպում, ուր 20-25 օրով հանգստանում է շուրջ 70 երեխա: Սահուն է ընթանում նաեւ «սերնդափոխությունը»: Ըստ տնօրենի, անցած տարի որդեգրվել է 10 երեխա, որոնցից 6-ը օտարերկրյա քաղաքացիների կողմից:

Իմ այցելության օրը երեխաների մի մասը գրադարանում էր, որն ստեղծվել է նվիրատվություններով, մյուսները զբաղված էին կար ու ձեւի խմբակում կամ հեռուստացույց էին դիտում: Մանկատանը գործում է նաեւ 20 երեխայից բաղկացած երգի-պարի խումբ, որն այդ օրը հանդես եկավ փոքրիկ համերգով: Նրանց տեսքը խնամված էր, հագուստը մաքուր, մաքրություն էր նաեւ բակում, որի համար հոգ են տանում իրենք երեխաները:

Հաստատությունն ունի նաեւ իր իրավաբանը. Կարինե Գասպարյանն ուսումնասիրում է երեխաների գործերի իրավական հիմքերը, հետեւողական է, որ պաշտպանվեն նրանց իրավունքները: Սերտ է կապը նաեւ դպրոցի հետ, հսկողության տակ են «դժվար» սաները:

Մեր զրույցների ժամանակ, նույնիսկ համերգի ընթացքում երեխաների դեմքից չէր հեռանում անջնջելի թախիծը:

Կան ծնողներ, որոնք 3-4 տարի չեն այցելել իրենց զավակներին, այդ թվում նաեւ Վանաձորում բնակվողներից (երեխաների 25 տոկոսը վանաձորցի է): Ճակատագրով կրկնակի դատապարտված այդ երեխաներն ստիպված են իրենց հարազատների կարոտն առնել դասընկերներից: Լքված երեխաների մի մասը պարզապես հրաժարվում է վերադառնալ իր ընտանիքը: Նրանց մեջ խոսում է նաեւ վիրավորված ինքնասիրությունը:

Գայանե Վարդումյանը սովորում է քաղաքի բժշկական քոլեջի 2-րդ կուրսում: Մանկատանը 5,5 տարի ապրում է երկու քույրերի հետ: Խուսափում է խոսել եղբոր մասին: Հայրը վաղուց մահացել է:

- Հինգ տարի մորս չեմ տեսել, նույնիսկ չգիտեմ, թե որտե՞ղ է, ի՞նչ է անում,- ասում է նա:- Տատս ապրում է Գյուլագարակ գյուղում եւ արձակուրդներին մեզ տանում է իր մոտ: Վերջին անգամ 10 օր մնացել ենք, բայց շուտ կարոտեցինք մեր դասընկերներին, ընկերներին ու վերադարձանք: Մենք շատ լավ տատիկ ունենք:

Հուզիչ էր մեր զրույցը 16 ամյա Անահիտ Առաքելյանի հետ: Հարցին, թե ի՞նչ է անում իր ստացած թոշակը, նա պատասխանեց. «Փողը հավաքում եմ, որ մորս գերեզմանը կառուցելու ծախսերը հոգամ»:

Կային երեխաներ, որ ամաչում էին խոսել իրենց ծնողների, հարազատների մասին, չէին ուզում ասել նույնիսկ անունները:

Ապրում են երեխաները՝ հարազատ օջախ դարձած այս մանկատանը, ապրում հաշված իրենց ճակատագրի հետ: Նրանք նույնպես մեր երկրի լիարժեք քաղաքացիներ են, արժանի պետության ու մեր բոլորիս ուշադրությանը:

ՄԱՐԳԱՐԻՏ ՄԵԿՈՒՅԱՆ

Արտերկիր

Մարտի 10-ին «Ազգը», հենվելով «Ռեգնում» գործակալության վրա, տեղեկացրել էր, որ Բաքվում Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւն ընդունել է ԱՄՆ պետքարտուղարի փոխօգնական Լին Պասկոյին: Ամերիկացի դիվանագետն Ալիեւի հետ մի շարք հարցեր քննարկելու մտադրություն է հայտնել եւ տարածաշրջանում «լուրջ փոփոխությունների» առնչությամբ կարծիքներ փոխանակել:

Իշխանափոխության ԱՄՆ-ի մտադրությունները չեն կարող ժողովուրդների ազատության հափանիշը լինել

Ակամա հարց է ծագում՝ որո՞նք են այդ փոփոխությունները, եւ Պասկոն ո՞ր տարածաշրջանը նկատի ունի: Մինչ հարցերին պատասխանելը նշենք, որ նույն Պասկոն Բաքու ուղեւորվելուց առաջ Վաշինգտոնում ընդունել էր ղղզական ընդդիմության ներկայացուցիչներին, որոնց այնտեղ էր հրավիրել ԱՄՆ պետքարտուղարությունը: Նա նրանց բացահայտ ասել է. «Ղղզստանում իշխանությունը պետք է փոխվի»:

Ինչո՞ւ: Որովհետեւ այս տարի Ղղզստանում նախ խորհրդարանական ընտրություններ են, ապա եւ նախագահական: «Ենի շաֆաքը» մարտի 11-ի համարում այդ մասին տեղեկացնելիս միաժամանակ նշում է, որ Պասկոն ղղզական ընդդիմության ներկայացուցիչների հետ մանրամասն քննարկել է Ղղզստանի առաջիկա ընտրություններին առնչվող հարցեր:

Այլ կերպ՝ պաշտոնական Վաշինգտոնը Ղղզստանում արդեն ծեռնամուխ է եղել իշխանափոխության աշխատանքներին: Սակայն հարցը սոսկ Ղղզստանը չէ, այլեւ Ադրբեջանում եւ Վրաստանում կատարված իշխանափոխությունները, «վարդյա» հեղափոխությունը երկրագնդի այլ մասերում տարածելու ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի մտադրությունը, Անդրկովկասում ամերիկյան դիրքերի վերոհիշյալ իշխանափոխություններով պայմանավորված ամրապնդումը, ինչպես նաեւ «Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրի ակտիվ արծարծումը եւ այն տեղն ու դերը, որոնք ծրագրով վերապահվում են անդրկովկասյան հանրապետություններին:

Այդ տեղի ու դերի մասին որեւէ տեղեկություն չկա: Առհասարակ «Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրի մանրամասներն էլ չհրապարակվելու պատճառով հայտնի չեն: Բայց որ Անդրկովկասն ընդգրկված է ծրագրում, եւ այս տարածքը ծրագրի մաս կազմող Միջին Ասիան կապում է Մերձավոր եւ Միջին Արեւելքին, ակնհայտ է: Թերեւս այդ առումով պատահական չէին հակաֆղանական պատերազմի նախօրյակին Միջին Ասիայում ռազմական ներկայություն ապահովելիս այդ ներկայությունը նաեւ Վրաստանում հաստատելու, ինչպես նաեւ Ադրբեջանի տարածքում ռազմաբազա տեղաբաշխելու Վաշինգտոնի նկրտումները:

Ռուս-հայկական ռազմավարական դաշինքը ամերիկացիներին զերծ է պահում Հայաստանում ռազմաբազա տեղակայելու մտադրությունից եւ խիստ սահմանափակում իշխանափոխության նրանց հնարավորությունները: Սակայն կարելի է ենթադրել, որ «վարդյա» հեղափոխությունը աշխարհի այլ մասերում տարածելու մտադրությամբ Վաշինգտոնն ինչպես տարածաշրջանային երկրներում, այնպես էլ Հայաստանում աջալերում է ընդդիմությանը՝ թերեւս դրանով էլ ներքաղաքական լարվածություն ստեղծելով:

Իշխանափոխությունն ու «վարդյա» հեղափոխության տարածումը չի կարող ժողովուրդների ազատության, ժողովրդավարության զարգացման միջոց լինել: Համենայն դեպս, «Ազատություն եւ ժողովրդավարություն» կարգախոսը Մերձավոր եւ Միջին Արեւելքում ընդամենը հանգեցրել է հակաֆղանական ու հակաիրաքյան պատերազմներին, Աֆղանստանի եւ Իրաքի օկուպացմանը: Այդ նույն կարգախոսներով ԱՄՆ-ը շարունակում է ռազմական ներխուժման սպառնալիքի տակ պահել Սիրիային եւ Իրանին: Այս ամենը, կարծում ենք, որոշակի պատկերացում, այնուամենայնիվ, տալիս է «Մեծ Մերձավոր Արեւելքի» ծրագրի բնույթի մասին:

ՀԱԿՈԲ ՉԱԲԲՈՏԱՆ

Իրանը ՄԱԳԱՏԷ-ին համարում է ԱՄՆ-ի կամակատար

Իրանի ներկայացուցիչները հայտարարել են, որ երկրում ուրանի հարստացման աշխատանքները շարունակվելու են: Նրանք ավելացրել են, որ Իրանը կարող է դադարեցնել համագործակցությունը Ատոմային էներգիայի միջազգային գործակալության՝ ՄԱԳԱՏԷ-ի հետ, քանի որ այդ կազմակերպությունը մշտապես կատարում է ԱՄՆ-ի հրահանգները եւ չի ուզում խոստովանել իրանական միջուկային ծրագրի բացառապես խաղաղ բնույթը:

Մինչդեռ Վաշինգտոնում գտնում են, որ Իրանի միջուկային ծրագիրն ունի ոչ միայն քաղաքացիական, այլեւ զազմական նպատակներ, որոնցից մեկը զանգվածային բնաջնջման զենքի մշակումն է: Իրանի վերաբերյալ ՄԱԳԱՏԷ-ի պատրաստած բանաձեւի նախագծում երկյուղներ են արտահայտվում, թե իրանցիները գործակալությանը սպառիչ տեղեկություններ չեն տվել իրենց միջուկային ծրագրի վերաբերյալ:

Երկուշաբթի օրը ՄԱԳԱՏԷ-ի ղեկավար Մոհամմեդ էլ Բարադեյը հայտարարել էր, թե իր ստացած տեղեկությունների համաձայն Իրանը եւ Լիբիան խախտել են միջուկային զենքը չտարածելու պայմանագիրը: Ի պատասխան, Իրանի արտգործնախարար Քամալ Խարազին հայտարարել է, որ Իրանի եւ ՄԱԳԱՏԷ-ի գործակցությունը չի կարող լինել միակողմանի: Նա զգուշացրել է, որ իր երկիրը կարող է առհասարակ դադարեցնել համագործակցությունը ՄԱԳԱՏԷ-ի հետ:

Խարազիի խոսքերով, Իրանն «օրինական իրավունք» ունի ուրան հարստացնել ատոմային ռեակտորների վառելիք արտադրելու համար: «Մենք կամովին եւ ժամանակավորապես դադարեցրել ենք ուրանի հարստացումը եւ, անկասկած, կվերսկսենք ապագայում, երբ կարգավորվեն հարաբերությունները ՄԱԳԱՏԷ-ի հետ», հայտարարել է նախարարը:

Պ. Ք.

Շվեյցարացի բանկատերը պահանջում է դատել «Մենատեպի» բաժնետերերին

Շվեյցարացի բանկատեր եւ տնտեսագետ Անդրե Շտրեբելն իր երկրի գլխավոր դատախազությանը ներկայացրած հայցով պահանջում է բրեական գործեր հարուցել ռուսական «Մենատեպ» բանկի բաժնետերերի դեմ: Նա մասնավորապես Միխայիլ Խոդորկովսկուն եւ Պլատոն Լեբեդեւին մեղադրում է ֆինանսական մեքենայությունների եւ փողերի լվացման մեջ: «Իզվեստիայի» թղթակցին տված հարցազրույցում Շտրեբելն ասել է. «Ինձ դուր չի գալիս ներկա իրավիճակը, երբ Շվեյցարիան դարձել է ռուս օլիգարխների հսկայական լվացքատուն»:

Լեբեդեւի եւ Խոդորկովսկու գործերը կապված են դեպի Շվեյցարիա դրամական փոխանցումների ոլորտում կատարված իրավախախտումների հետ: Ըստ Շտրեբելի, խոսքը մի քանի տարի շարունակ տեղի ունեցած փողերի լվացման մասին է: «Խոսքը տասնյակ միլիոնավոր դոլարների մասին է», ընդգծել է նա:

Շտրեբելը նշել է, որ ռուսաստանյան «Յուկոս» ընկերության նկատմամբ հարուցված բրեական գործի շրջանակներում Շվեյցարիայում վերջերս անցկացված խուզարկությունները կապված չեն իր հայցի հետ: Նա ընդգծել է, որ «Մենատեպից» եւ Խոդորկովսկուց բացի, ինքը կարող է թվարկել տասնյակ այլ խարդախների անուններ: Լեբեդեւ, Կագալովսկի («Մենատեպի» վարչության նախկին փոխնախագահ), Գոլուբեւիչ («Յուկոսի» եւ տխրահռչակ Ելենա Կոլոնգ-Պոպովայի նախկին գործընկեր), Բերեզովսկի, Աբրամովիչ, Ֆրիդման....

«Պարզապես Խոդորկովսկին անմաքրաբարո օլիգարխի ամենափայլուն օրինակն է: Նրա նմանները պարբերաբար գրոհում են Շվեյցարիան, այստեղ լվանում իրենց փողերը: Եկել է դրան վերջ դնելու ժամանակը», ասել է շվեյցարացի բանկատերը:

Ականջների հետքերը կմատնեն հանցագործներին

Բրիտանացի բրեագետները հայտնաբերել են ծեռնոցավոր հանցագործներին գտնելու եղանակ: Մատնահետքեր չթողնելով՝ նրանք կարող են թողնել ականջախեցիների հետքեր: Իսկ վերջիններս ամեն մարդու համար նույնքան եզակի են, որքան մատնահետքերը:

CNN հեռուստաընկերությունը հաղորդում է, որ ստեղծվել է համակարգչային հատուկ գետնդարան, որը թույլ է տալիս հանցագործներին ճանաչել ականջախեցու հետքերով: Կողոպտիչներն ու մարդասպանները, որպես կանոն, չեն փորձում թաքցնել իրենց ականջները: Ավելին, հաճախ դռանը կպած փորձում են ականջ դնել եւ պարզել, թե ինչ է կատարվում ներսում:

Լիդս քաղաքի համալսարանում ստեղծվել է ականջախեցիների հետքերի գետնդարան, որը թույլ է տալիս անչափ արագացնել հանցագործների որոնումը եւ բացառել սխալները: Ականջախեցիների հետքերն ստացվում են պլաստիկե փոքր մեխանիզմի օգնությամբ:

Որպես նախապատրաստություն «Այլեւս երբեք 24 Ապրիլ» խորհրդաժողովի

ԵՀՄՖ քարտուղար Թորոս Սակերյանը հանդիպեց Վալանսի հայ համայնքի, քաղաքապետերի, ինչպես նաեւ Ֆրանսահայ գործիչների հետ:

Ֆրանսիայի «Փոքր Հայաստան» Վալանս քաղաքում ապրիլի 16-18-ին տեղի է ունենալու «Այլեւս երբեք 24 Ապրիլ» խորհրդաժողովը՝ նվիրված Հայաստանի եւ Արցախի պետականության ամրապնդման խնդրին եւ այդ գործում սփյուռքի մասնակցությանը: Այդ թվականը որոշվեց համատեղ՝ Վալանսի, Գրենոբլի, Լիոնի, Մարսելի ու Փարիզի հայկական կազմակերպությունների ու միությունների հետ, որոնք Հայոց ցեղասպանության ոգեկոչման օրը, 24 Ապրիլին կազմակերպում են մի շարք հանդիսություններ, երբեր, սգո ու ցասումի ելույթներ:

Վալանսի խորհրդաժողովի նախապատրաստման նպատակով եվրոպայի հայկական միությունների քարտուղար Թորոս Սակերյանը 2004 թ. փետրվարի վերջին այցելեց Փարիզ ու Վալանս: Ֆրանսիայի մայրաքաղաքում կազմակերպվել էին մի շարք հանդիպումներ ՀՀ դեսպան էդուարդ Նալբանդյանի, «Նուվել դ'Արմենի» ամսագրի խմբագիր եւ CAAF-ի նախագահ Արա Թորանյանի, հայտնի քաղաքական գործիչ Ալեխի Կյովծյանի, CRDA-ի նախագահ Ժան-Կլոդ Քեբաբջյանի, «Յառաջ» օրաթերթի երկարամյա խմբագիրներ Արփի Միսաքյանի եւ Արփի Թոքոյանի, «Աշխարհ» շաբաթաթերթի խմբագիր Ժորժ Սարյանի, «Այբ Ֆ. Մ.» հայկական ռադիոկայանի տնօրեն Վարդան Գաբրիելյանի եւ այլոց հետ: Քննարկվեցին ինչպես «Այլեւս երբեք 24 Ապրիլ» խորհրդաժողովի, այնպես էլ միացյալ ջանքերով Թուրքիայի մուտքը եվրամիություն արգելելու ուղիները: ԵՀՄՖ-ն մինչ այդ մասնավոր հաղորդագրությամբ դատապարտել էր Բուդապեշտում տեղի ունեցած անարգ ոճիրը հայ սպայի նկատմամբ՝ ադրբեջանցի ցեղապաշտ զինվորականի կողմից: Անցնելով Վալանս, ուր այսօր մեծ թվով հայեր են ապրում, նաեւ՝ հարյուրավոր «հայաստանցիներ», ԵՀՄՖ-ի քարտուղարին ընդունեցին քաղաքապետ Պատրիկ Լաբոնի հետ: Վերջինս հայտնեց Հայոց ցեղասպանությանը նվիրված բանգարանի բացման մասին... Քաղաքապետն իր զորակցությունը հայտնեց խորհրդաժողովի կազմակերպմանը, խոստանալով հոդել իր բացման խոսքը՝ սփյուռքի եւ Հայաստանի ղեկավարներին:

ԵՀՄՖ-ի պատվիրակությունը սենատոր Պիրասի աշխատասենյակում

Հիշարժան հանդիպում կայացավ Բուրգ-դը-Վալանսի քաղաքապետ, սենատոր Բեռնար Պիրասի հետ: Խորհրդակցությանը ներկա էր նաեւ նահանգապետի խորհրդական Ալեն Մորիսը: Մեծարգո սենատորը գլխավոր նախաձեռնողն է եղել Հայոց ցեղասպանության ընդունման բանաձեւի Ֆրանսիայի Սենատում եւ ապա պետության կողմից:

Խորհրդակցության ընթացքում քաղաքապետ Պիրասը կոչ արեց հայերին միաբանվել եւ պայքարել Թուրքիայի եվրամիություն ընդունման փորձերի դեմ, միաժամանակ իր բոլոր միջոցները տրամադրելով խորհրդաժողովի հաջողությանը:

Շնորհակալություն հայտնելով հայ թե ֆրանսիացի հյուրընկալներին, ԵՀՄՖ-ի պատվիրակությունը վերադարձավ Ժնեւ, ապա Երեւան՝ Հայաստանի եւ Արցախի համար այս դժվարին օրերին արժանապես դիմագրավելու ծառացող հարցերը, հաջողությամբ պատկելու առաջիկա խորհրդաժողովը:

ՏԱՄԱ ՄՈՍԿՈՖՅԱՆ

Փարիզ-Վալանս-Երեւան

Թաներ Աֆշամի նոր գիրքը Հայոց ցեղասպանության մասին

Տորոնտոյի (Կանադա) Զորյան ինստիտուտից ստացված հաղորդագրությունը տեղեկացնում է, որ Լոնդոնի «Զեղ բուֆս» հրատարակչատան համագործակցությամբ ինստիտուտը լույս է ընծայել թուրք հայտնի պատմաբան Թաներ Աֆշամի նոր գիրքը, որը կրում է «Կայսրությունից դեպի հանրապետություն: Թուրքական ազգայնամոլությունն ու Հայոց ցեղասպանությունը» խորագիրը:

Այս ցնցող գիրքը, որը քննարկում է նաեւ ժողովրդավարության գործընթացը ժամանակակից Թուրքիայում, նշանակալի քայլ է Թուրքիայում Հայոց ցեղասպանության տաբու դարձած թեման քննարկելու բնագավառում: Առաջին երեք գլուխներում ներկայացված են թուրքական ազգայնամոլությունն ու դրա ակունքները: Չորրորդ եւ հինգերորդ գլուխներում Աֆշամը հետեւում է Օսմանյան Թուրքիայի քաղաքական կլիմայի փոփոխություններին, որոնք ի վերջո հանգեցրին ցեղասպանության իրականացմանը: Քննության է ենթարկում ցեղասպանության պատճառները: Հետո նա անցնում է այդ դեպքերի ազդեցությանը հանրապետության վրա: Եզրափակիչ գլուխներում նա այն համոզմունքն է հայտնում, որ ցեղասպանության շուրջ քննարկումներն անհրաժեշտ բաղադրամասերն են երկրի ժողովրդականացման գործընթացում:

«Նա առաջին թուրք մտավորականն է, որն ընդունում եւ բացահայտորեն քննարկում է Օսմանյան կայսրության իրագործած Հայոց ցեղասպանությունը: Գիրքը հիմնված է արխիվային հարուստ փաստաթղթերի վրա», ասել է այս առթիվ Զորյան ինստիտուտի ցեղասպանության ուսումնասիրությունների բաժնի տնօրեն պրոֆ. Վահագն Տատրյանը:

Ավելացնենք, որ Թաներ Աֆշամը ծնվել է Թուրքիայի հյուսիսարեւելյան շրջանում: Քաղաքականությամբ զբաղվել է վաղ հասակից: Թուրքիայում քաղաքական ակտիվ կյանք վարելուց հետո ստիպված է լինում որպես փախստական հաստատվել Գերմանիայում: Իր դոկտորականը ստացել է Հանովերի համալսարանից: Հեղինակ է բազմաթիվ գրքերի: Ներկայումս որպես պրոֆեսորի օգնական դասավանդում է Մինեսոտայի համալսարանում:

Մշակույթ

Պերճ Ժամկոչյան՝ նվիրվածության եւ առաքելության մարմնավորողը

«Գնա մեռի, արի սիրեմ» արտահայտությունն անգամ այլեւս բնորոշ չէ մեզ. մարդը մեռնում է, բայց ոչ ոք չի հիշում նրա գործը. բարեւարությունն անգամ. Հատկապես չեն հիշում նրանք, ովքեր բայց ոչ ոք չի հիշում նրա գործը. բարեւարությունն անգամ. Հատկապես չեն հիշում նրանք, ովքեր պատասխանատու էին գոնե մահվան կապակցությամբ ուշադիր լինել. առնվազն պատշաճ մահախոսականներ հրապարակել: Խոսքը վերաբերում է առաջին հերթին ՀՀ մշակույթի նախարարությանը, որ պարտավոր էր երգեհոնահար Պերճ Ժամկոչյանի մահվան կապակցությամբ հիշեցնել մեր ժողովրդին, որ, օրինակ, 70-ական թթ. այդ աշխարհահռչակ երաժշտի միջոցով էր Հայաստանն օժտվել հրաշալի երգեհոններով, որոնք հնչում են եւ հնչելու են դեռ երկար ժամանակ:

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, փետրվարի 23-ին Մասաչուսեթսում կարճատեւ հիվանդությունից հետո Կարիտաս Նորվուդ հիվանդանոցում վախճանվել է ամերիկահայ աշխարհահռչակ երգեհոնահար Պերճ Ժամկոչյանը:

Շահնազ եւ Նազարեթ Ժամկոչյանների որդի Պերճը «Նյու Ինգլենդի երաժշտանոցի» շրջանավարտն էր, որտեղ դեռ ավարտական դասարանում սովորելու տարիներին մաս էր կազմել երգեհոնային ֆակուլտետին: 24 տարեկանում իր առաջին համերգը տվել է Բոստոնի սիմֆոնիկ երաժշտության դահլիճում: Մի շարք հեղինակավոր նվագախմբերի հետ շարք է աշխարհով մեկ: Մ. Նահանգներն է ներկայացրել Փարիզում կազմակերպված հոգեւոր երաժշտության 3-րդ համաշխարհային կոնգրեսում, իսկ 1965-ին ամերիկացի առաջին երգեհոնահարն է եղել, որ շրջագայել է Խորհրդային Միությունում:

Համաշխարհային սիմֆոնիկ նվագախմբի հետ նա նվագել է բացման հանդիսությունների ընթացքում այնպիսի միջազգային կառույցների, ինչպիսիք են Վաշինգտոնի «Քենեդի» կենտրոնը, Նյու Յորքի «Լինկոլն» կենտրոնը եւ Օրլանդոյի (Ֆլորիդա) «Դիզնեյ աշխարհը»: 1957-ին նշանակվել է Բոստոնի սիմֆոնիկ նվագախմբի, այնուհետեւ նաեւ Բոստոն «Փոփս» նվագախմբի երգեհոնահար: Այդ խմբերի հետ կատարված ձայնագրությունները նրան համաշխարհային համբավ բերել: Նրանցից մեկին «Նյու Յորք թայմս» հորջորջել է «բոլոր ժամանակների լավագույն 50 ամենակարեւոր ձայնագրություններից մեկը»: Այսօր էլ այն Բեսսելերնեի ցուցակում է:

Մի շարք սիմֆոնիկ նվագախմբերի հետ նա շրջագայել է աշխարհով մեկ, ելույթներ ունեցել Տոկիոյում, Օսակայում, Մոսկվայում, Երեւանում, Բամբերգում, Քյոլնում, Վիեննայում, Նյու Յորքում, Վաշինգտոնում եւ այլուր:

1983-ին Ճապոնիայի Շիկա խաղաքաղաքի Շինձի Շումեի տաճարին է նվիրել աշխարհի ամենամեծ երգեհոնը, դրանից հետո ամեն տարի այցելել եւ նվագել է այնտեղ: Նա ելույթներ է ունեցել ամերիկացի 6 նախագահների, Բրիտանիայի եւ Ճապոնիայի արքայական ընտանիքների առաջ: Հռոմի պապի Ս. Նահանգներ կատարած առաջին այցելության ժամանակ եւս նրան են հրավիրել երգեհոն նվագելու: Պարգեւների է արժանացել Պողոս 6-րդ պապի, կարդինալ Ա. Աղաջանյանի, Վազգեն Ա կաթողիկոսի, Հայաստանի նախագահի, Գիտությունների ակադեմիայի, ինչպես նաեւ Վենետիկի Մխիթարյան միաբանության կողմից:

Նրա վերջին ելույթները տեղի են ունեցել Միլանում, Մյունխենում եւ Հռոմում 2003 թ. դեկտեմբերին: Նվագել է Հովհաննես Պողոս Բ-ի համար Վենետիկի Սբ. Ղազարի մենաստանում: Իր անզուգական տաղանդին զուգահեռ նա նաեւ ներշնչման աղբյուր էր եւ նվիրվածության ու առաքելության վառ օրինակ: 1970-ին իր իսկ նախաձեռնությամբ հիմնված «Կոմիտաս երգեհոնային հիմնադրամի» միջոցով նա բազմաթիվ երգեհոններ է նվիրել աշխարհի տարբեր երկրների, այդ թվում Հայաստանի հասարակություններին:

Հ. Ս.

Հրատարակվել է իրանահայ բանաստեղծի նոր ժողովածուն

Երեւանում պետական պատվերով լույս է տեսել իրանահայ բանաստեղծ, իրանահայ գրողների միության նախագահ Վարանդի (Սուքիաս Քյուքյան) բանաստեղծությունների «Ջերմ ստվերներ» անվամբ ժողովածուն, որը կազմել եւ խմբագրել է Սեյրանուհի Գեղամյանը:

Գեղանկարիչ ՆԻԿՕ-ի պատկերազարդմամբ հատորը պարունակում է 50-ամյա բանաստեղծի վերջին շրջանի ստեղծագործություններն ու պոեմները, ինչպես նաեւ նախորդ տարիներին հորինված, բայց ժողովածուների մեջ չմտած գործերը:

Ներկայացված պոեզիան, ինչպես Արմենպրեսի թղթակցին ասաց գրքի խմբագիրը, ներծծված է ջերմ ու անկեղծ հայրենասիրությամբ, գրված դասական պոեզիային հավատարիմ սկզբունքներով, հուզականությամբ ու ներգործուն հմայքով: Շատ տողեր կան՝ նվիրված մայրաքաղաք Երեւանին ու Հայաստանին, Արցախին, Էրգրին, Մաշտոց ուսուցչապետին, ազգային հերոսներին:

Յուրաքանչյուր հոբելյանական ժողովածուի հեղինակը ծնվել է Թեհրանում, հայեցի հիմնավոր կրթություն ստացել, ու պատահական չէ, որ այսօր հայոց լեզու է դասավանդում Թեհրանի Ազատ համալսարանի օտար լեզուների ֆակուլտետում, որի շրջանավարտն է ինքը:

Մոտ 20 ժողովածուների հեղինակ, Հայաստանի գրողների միության անդամ բանաստեղծը, որը մինչեւ գրական աշխարհ մտնելը նաեւ գեղանկարչության ուսում է առել, մի շարք գրքերի համար մրցանակների է արժանացել Թեհրանում, Բեյրութում, Երեւանում, Էջմիածնում, պարգեւատրվել տարբեր պատվոգրերով: Բեմականացվել են նրա ստեղծագործությունները: 2001 եւ 2002 թվականներին մասնակցել է հայ գրողների համաշխարհային համագումարներին:

ՎԱՆԻԿ ՍԱՆԹՈՒՅԱՆ,
Արմենպրեսի թղթ. «Ազգի» համար

«Շելլ» դաշնամուրային եռյակի գարնանային ղողանջները

1998 թ.-ին Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի շրջանավարտ երիտասարդ երաժիշտների՝ Շուշան Հակոբյանի (դաշնամուր), Եկատերինա Ջանփոլադյանի (թավջութակ) եւ Լիլիթ Ջաֆարյանի (ջութակ) նախաձեռնությամբ կազմակերպվեց դաշնամուրային եռյակը՝ իր անունը կազմելով երաժիշտների անվանատառերից՝ Շելլ:

Այսօր երիտասարդ երաժիշտները Հայաստանի պետական ֆիլհարմոնիայի մենակատարներն են: Օրերս կամերային երաժշտության տանը կայացավ նրանց գարնանային շնորհանդեսը:

Երեկոն բացվեց Բրամսի C-dur opus 87 տրիոյով: Այս լուսավոր կտավի բնության եւ մարդկային զգացմունքների ոգեւորությանը համահունչ էին կատարողների բարձր ու վճիռ «եռահնչյունային» անսամբլային ծուլվածքը: Այլ «հնչյունային» պատկեր ստեղծվեց երկրորդ բաժնի ընթացքում:

Մենակատարների շնորհիվ հնչեց նաեւ Ռախմանինովի d-moll opus էլեգիական տրիոն: Շուշան Հակոբյանի, Վահան Գրիգորյանի, Լիլիթ Ջաֆարյանի հավասարազոր «եռածայնությունը» վերստեղծելով ստեղծագործության բնույթը, արտահայտեցին ռուս կոմպոզիտորի ստեղծագործական դիմանկարին բնորոշ ծանր տրամադրությունը եւ միաժամանակ հատատական հզորության գաղափարը...

Այսպիսով, «Շելլ» դաշնամուրային եռյակի այս ելույթը եւս մեկ անգամ ոգեկոչեց նշյալ ստեղծագործողների պատանությունը արվեստին:

ԼԱՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ,

Հայոց պատմության մի արքատաշ բեկորը

Պատմական Հայաստանի յուրաքանչյուր տեղանքի, բնակավայրի, գյուղի ու քաղաքի վարչ ու բարի, անցուդարձերի, դեպքերի, երեւելի մարդկանց կյանքի ու գործունեության համակողմանի վերհանումը մեր գոյության ու հարատեւության վավերացումն է, հայոց ամբողջական պատմության մի սրբատաշ բեկորը: Այդ իմաստով կարեւորվում է «Ճարտար» խորագրով աշխատության հրատարակումը (2003 թ., «Զանգակ-97» հրատարակչություն, 144 էջ), որի հեղինակն է անվանի գիտնական, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սերգեյ Մելքումյանը:

Արցախ նահանգի Վարանդա գավառի արեւելյան մասում լայնատարած բազմաճյուղ Ճարտար գյուղը հին, վաղնջական պատմություն ունի, ինչպես Արցախ աշխարհը: Նա հայոց Արցախի պատմության քառուղիներում յուրահատուկ դեր է խաղացել երկրամասն արտաքին խուժդուժ ցեղերի ասպատակություններից պաշտպանելու, ինչպես նաեւ նրա մշակույթի, կրթության, տնտեսության զարգացման ոլորտներում: Արցախական աշխարհի այդ խոշոր գյուղը, նրա անկոտրուն բնակչությունը հատկանշվում են հայ ժողովրդին բնորոշ բարի ավանդույթներով, սովորույթներով, բարոյական առաքինի կողմերով, աշխատելու ու ստեղծելու տոկունությամբ, վսանգի պահին հայրենիքը կրծով պաշտպանելու վճռականությամբ ու խիզախությամբ:

Ս. Մելքումյանն աշխատության մեջ համառոտ ակնարկով ներկայացնում է հայրենի ճարտար գյուղի աշխարհագրական դիրքը, բնական պայմանները ու պատմական անցյալը: Հետո անդրադառնում է բնակչության ազգագրական հատկանիշների, սովորույթների պատկերմանը, նշանավոր մարդկանց կյանքի ու գործունեության բացահայտմանը: Շատ են նշանավոր մարդիկ, որոնց թվում են հանրահայտ կուսակցական, պետական գործիչ եղիշե Ասծատրյանը, Սոցիալիստական աշխատանքի հերոս, Ճարտարի տնտեսության նախկին երկարամյա նախագահ, բազմաբեղուն Սուրեն Ադամյանը, Ռուսաստանի ԳԱ թղթակից-անդամ, օվկիանոսագետ Արտյոմ Սարգսյանը, բազմաթիվ մանկավարժներ, տարբեր գիտությունների դոկտորներ, պրոֆեսորներ, գիտությունների թեկնածուներ, այլեւայլ բնագավառների աշխատողներ: Հեղինակը մի առանձին սիրով ու գորովանքով է բնութագրում, գնահատում նշանավոր մարդկանց գործն ու վաստակը, հայրենի գյուղի բարգավաճմանը նվիրաբերած նրանց ջանքերն ու եռանդը:

Գրքում դրվագ առ դրվագ ներկայացվում են Ճարտարի պայծառ գավակների հերոսական ոգորումներն ու պայքարը երկրորդ աշխարհամարտի եւ Արցախյան գոյապայքարի տարիներին: Երկրորդ աշխարհամարտին մասնակցել է 1200-ից ավելի ճարտարեցի, որոնցից 500-ը զոհվել են ռազմաճակատում: Իսկ արցախյան ազատամարտում զոհվել են 119 մարդ, թուրք-ադրբեջանցիների ոմբահարումների հետեւանքով՝ 29 հոգի: Դրանց բոլորի անուն-ազգանունները փորագրված են գյուղի գեղատեսիլ սարալանջին կառուցված վիթխարի հուշարձան-թանգարանի պատին: Ազատության համար զոհված քաջերի մասին պատմող էջերը գրված են խորին ցավով ու երախտիքի ջերմ զգացումներով:

1998-1994 թթ. արցախյան ազատագրական պատերազմում անգնահատելի դեր ունեցավ Մարտունու ազատագրական ջոկատների լեգենդար զորավար Մոնթե Մելքոնյանը: Այդ առասպելական հերոսի շնորհիվ է, որ թուրք-ադրբեջանցիները չկարողացան մտնել Մարտունու շրջանի տարածք, ինչպես նաեւ Ճարտար գյուղը: Իսկ այդ երեւույթը խոշոր նշանակություն ունեցավ Լեռնային Ղարաբաղի ամբողջ պատերազմի ու հաղթանակի համար: Արցախի երախտավոր ժողովուրդը Մոնթեի մարմարակերտ հուշարձանը կանգնեցրեց Ճարտարին մերձ Մարտունի քաղաքի կենտրոնում:

Գրքում ներկայացվում են Ճարտարի խաղաղ տարիների ստեղծագործ աշխատանքի արդյունքները, Ճարտարի հզոր տնտեսության տարբեր ճյուղերի արարումները, որ դրսեւորվում են նաեւ այսօր:

Մի առանձին ջերմությամբ է խոսվում գյուղի նշանավոր տոհմերի, դրանցից յուրաքանչյուրի ինքնաշխատությունների, մասնագիտական հակումների, գյուղում, շրջապատում ունեցած դերի, հեղինակության, ազգաբանական հատկանիշների մասին:

Հետաքրքրությամբ է կարդացվում Ճարտար գյուղի կրթության, մշակույթին, առողջապահության օջախների մասին կատարված վերլուծությունը: Գրքի վերջում հեղինակն անդրադառնում է Ճարտարի տնտեսության զարգացման հեռանկարային խնդիրներին: Ի դեպ, Ճարտարեցիների հետ ժամանակին հանդիպումներ է ունեցել Խորհրդային Միության մարշալ, մեծ զորապետ Հ. Ք. Բաղրամյանը, որ խմբանկարը՝ տեղացիների հետ, զետեղված է գրքում: Աշխատությանը մի առանձին շուք եւ բովանդակություն են հաղորդում Ճարտարի հիասքանչ բնության առանձին տեսարաններին, կրթության ու մշակույթի օջախներին վերաբերող պատկերները, նշանավոր մարդկանցից շատերի լուսանկարները:

Գրախոսվող աշխատությունը հեղինակի՝ հայրենի եզերքի, նրա հող ու ջրի, արարող ու տոկուն մարդկանց նկատմամբ դրսեւորած կարոտի ու սիրո վառ արտահայտությունն է: Այդ գիրքը Ճարտար գյուղի ազատության համար մղած հերոսական պայքարի ու խաղաղ օրերի բեղուն տնանքի ու արարումի տարեգրություն է՝ գրված ներշնչանքով ու գիտական խոր բովանդակությամբ: Դա մի սրբազան մասունք է Արցախի ու Հայաստանի ամբողջական պատմության: Այդ գրքին նախորդել են նրա «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխարհագրություն» ծավալուն աշխատությունները: Նպատակը մեկն է՝ աշխարհին ցույց տալ, որ մերօրյա Արցախը հայ ժողովրդի ազատագրական պայքարի երախայրիքն է. նա պատմական ժառանգորդության օրինական իրավահաջորդն է, կենդանի իրողություն եւ հավերժական գոյություն, ինչպես Մովսն ու բիբլիական Արարատը:

ՌԱՍՏԻ ՊԱՊԵԼՅԱՆ,

ԼՈՒՅՍ Է ՏԵՍԵԼ

ՆԿԱՐՉԻ ԱՇՔԵՐՈՎ

Գարուն է

Գարունն առաջինը նկատել են տալիս աղջիկները, ովքեր հագիվհաց փրկվելով ձմեռային խուրձ ու մուգտակից, հնարավորություն ունեն ցուցադրելու իրենց գեղեցկությունը: Ա՛յդ գարունը նկատում են ծաղկավաճառները, ովքեր տղամարդկանց ծաղիկներ են տալիս գեղեցիկ աղջիկներին նվիրելու համար:

Բայց ամենաառաջինը գարունը, գեղեցիկ աղջիկներին եւ ծաղիկները տեսնում է Գեորգի Յարալյանը «Ազգի» նկարիչը. նա, ով անգամ ամենացուրտ ձմռանը տեսնում էր աղջիկների եւ կանանց գեղեցկությունը: Այսօրվա նկարն էլ՝ մեզ ապացույց:

Լարված մրցադայքարը շարունակվում է

Շախմատային մրցաշարի 3-րդ օրը Ստեփանակերտում դարձյալ անցավ լարված մրցադայքարում: Նախօրյակին ավարտված խաղերում արձանագրվեց երեք հաղթանակ եւ երկու ոչ-ոքի: Սվեշնիկովն առավելության հասավ Պետրոսյանի, Ասրյանը Կոբալիայի եւ Մահամին Փաշիկյանի նկատմամբ, իսկ Մայելյա-Անասասյան եւ Պելեսյե-Սարգսյան հանդիպումները խաղաղ ելք ունեցան:

Առաջատար Էլոիին Սվեշնիկովն է, որն ունի երկու միավոր:

Ինչպես եւ ակնկալվում էր, չուշացավ Ադրբեջանի պաշտոնական բողոքը Ստեփանակերտում շախմատի միջազգային մրցաշար կազմակերպելու կապակցությամբ: Ադրբեջանի արտգործնախարարության բողոքին, կարելի է ասել, անտարբեր են վերաբերվում Ստեփանակերտում: Եվ խոսքը տվյալ դեպքում միայն տեղի իշխանություններին չէ: Այն փաստը, որ շախմատի վարպետները նույն եռանդով շարունակում են մրցադայքարը, վկայում է Ադրբեջանի դժգոհության հանդեպ այդ անտարբերության մասին: Նույնիսկ, ընդհակառակը, Բահադուր Զոբավան, օրինակ, որը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մայրաքաղաք է ժամանել մրցաշարի պատվավոր հյուրի կարգավիճակով, հիացմունքով է խոսում ստեփանակերտցի պատանի շախմատիստների մասին: Մարտի 9-ին նորաբաց շախմատի մանկապատանեկան դպրոցում 31 խաղատախտակի վրա խաղացված միաժամանակյա մրցադայքարը, որի արդյունքում նա կրել է երկու պարտություն եւ մեկ ոչ-ոքի, լավ տպավորություն է թողել վրացի շախմատիստի վրա: Իսկ օվեյցարացի գրոսմայստեր Յանիկ Պելեսյեն, որի մասին ադրբեջանական «Զերկալոն» գրում է, իբր վերջինս չգիտեր ուր է գնում խաղալու, Ստեփանակերտ գալու առաջին իսկ օրը խոստովանել է Ղարաբաղը մոտիկից տեսնելու իր անթաքույց ցանկության մասին:

Кобалия М. Асрян К.

Շախմատը եւ քաղաքականությունն անհամատեղելի են: Համենայնդեպս, նրանք, ովքեր զարգացմամբ առհասարակ, հակված են այն տեսակետին, որ ստեփանակերտյան միջազգային մրցաշարը բոլոր առումներով դրվատանքի արժանի մարզական միջոցառում է: Այս տեսանկյունից, թերեւս, տեղին է հիշել աշխարհի 13-րդ չեմպիոն Գարի Կասպարովի խոսքերն այն մասին, որ ինքն ուրախ է, որ պատերազմից թոթափվող Ղարաբաղում կարողանում են մշակույթ եւ սպորտ զարգացնել:

ԳԵՎՈՐԳ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

Թիմանը գիջեց դիրքերը

Ռեյկյավիկում ընթացող շախմատի միջազգային մրցաշարում կայացան 4-րդ տուրի հանդիպումները: Գերմանիան ներկայացնող Լեւոն Արոնյանը ոչ-ոքի ավարտեց պարտիան Միլոշ Պավլովիչի հետ: Տուրի կենտրոնական հանդիպումը Ալեքսեյ Դրեեւի մրցավեճն էր մրցաշարի միանձնյա առաջատար Յան Թիմանի հետ: Ռուսաստանցի գրոսմայստերը հաղթեց մրցակցին, որը նախորդ տուրերում միայն հաղթանակներ էր տոնել: Այդ հաջողության շնորհիվ Ալեքսեյ Դրեեւը վաստակեց 3,5 միավոր եւ Թոմաս Լյութերի ու Սերգեյ Էրենբուրգի հետ գլխավորեց մրցաշարային աղյուսակը: Լյութերը սպիտակներով պարտության մատնեց Նիկոլա Սեղլակին, իսկ Էրենբուրգը հաղթեց Նակամուրային: Լեւոն Արոնյանն առաջատարներից հետ է մնում կես միավորով եւ բաժանում է 4-17-րդ տեղերը:

Կուեռտենը հրաժարվում է հավասականում հանդես գալուց

Թենիսի Բրազիլիայի կոնֆեդերացիան ներկայումս դժվարին կացության մեջ է հայտնվել: Հավասականի առաջատար Գուստավո Կուեռտենը հրաժարվել է թիմի կազմում հանդես գալ Դեւիսի գավաթի խաղարկությունում: Նրա օրինակին է հետեւել նաեւ հավասականի թիվ 2 ռակետ Ֆլավիո Սարեսան: Պատճառն այն է, որ թենիսիստները հանձնայն չեն թենիսի Բրազիլիայի ֆեդերացիայի վերջերս ընդունած որոշման հետ: Առանց նրանց կարծիքը հաշվի առնելու, ֆեդերացիան հավասականի ավագ Ռիկարդու Ասիոլայի փոխարեն այդ պատասխանում նշանակել էր Ժաին Օնսինսին: Նշված թենիսիստները հայտարարել են, որ քանի դեռ հավասականի ավագի պատասխանը գբաղեցնում է Օնսինսը, իրենք թիմ չեն վերադառնա: Հետաքրքրականն այն է, որ Օնսինսը եւս որոշել է հրաժեշտ տալ հավասականին: Վերջինս հայտարարել է, որ ինքը վաղուց էր երազում գլխավորել հավասականը, սակայն նման պայմաններում նպատակահարմար չի գտնում շարունակելու աշխատանքը: Ֆեդերացիան առայժմ չի արձագանքել Օնսինսի որոշմանը:

Վերադարձը նշանավորեց հաղթանակով

Ծանր քաշում պրոֆեսիոնալ բոքսիամարտի աշխարհի նախկին չեմպիոն Բրյուս Սելդոնն ութամյա ընդմիջումից հետո վերադառնալով ռինգ, 3-րդ ռաունդում նոկաուտի ենթարկեց իր հայրենակից Օշիս Թիսդելին: Վերջին ռաունդում նոկաուտի պարտություն էր դուրս եկել 1996 թ.: Առաջին իսկ ռաունդում տեխանգամ Սելդոնը ռինգ էր դուրս եկել 1996 թ.: Առաջին իսկ ռաունդում տեխնիկական նոկաուտով պարտվելով Մայք Թայսոնին, նա մրցակցին գիջեց բոքսիամարտի համաշխարհային ընկերակցության վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Թիսդելին հաղթելուց հետո Սելդոնը հայտարարել է, որ մտադիր է ռեւանշի հասնել Մայք Թայսոնի նկատմամբ: Նա նախատեսել է յուրաքանչյուր ամիս մեկ մենամարտ անցկացնել լավագույն մարզավիճակ ձեռք բերելու նպատակով, իսկ տարեվերջին ուժերը չափել Թայսոնի հետ:

Սպասելիքները չարդարացան

Վերջին կես տարվա ընթացքում Դորտմունդի «Բորուսիան» 30 մլն եվրոյի վնաս է կրել: Այս մասին հայտարարել է ակումբի նախագահ Հերդ Նիբաումը: Հիմնական պատճառը թիմի անհաջող մրցելույթներն էին եվրագավաթներում: «Բորուսիան» նախ դուրս մնաց չեմպիոնների լիգայի մրցաշարից, ապա անհաջողության մատնվեց նաեւ ՈՒԵՖԱ-ի գավաթի խաղարկությունում: Ակումբի ղեկավարությունը հույս ուներ զգալի գումարներ վաստակել խաղեր սիրելով: Սակայն թիմի անհաջող ելույթների պատճառով սպասելիքները չարդարացան:

Որպեսզի թիմի ֆինանսական վիճակը կարգավորվի եւ ակումբը սիրված «Բորուսիայի» վաճառելու բարձր աշխատավարձ ստացող ֆուտբոլիստներին, «Բորուսիայի» ընթացիկ մրցաշրջանում պետք է կրկին եվրագավաթներում հանդես գալու իրավունք նվաճի:

Բեքհեմն առայժմ «Չելսիին» հարկավոր չէ

Անգլիայի հավասականի ավագ եւ Մադրիդի «Ռեալի» կիսապաշտպան Դեյվիդ Բեքհեմը հայտարարել է, որ եթե Ռոման Աբրամովիչը «Ռեալին» 140 մլն լիր Բեքհեմը հայտարարել է, որ եթե Ռոման Աբրամովիչը «Ռեալին» 140 մլն ֆունտ ստեռլինգ (259 մլն դոլար) վճարի, ապա ինքը պատրաստ է մրցաշրջանի ավարտից հետո տեղափոխվել «Չելսի»: Եթե իրոք նման գումար վճարվի, ապա դա կլինի համաշխարհային ֆուտբոլի պատմության մեջ ամենաթանկ տրանսֆերը: Իսկ առայժմ ռեկորդային է համարվում Զինեդին Զիդանի տրանսֆերը: 2001 թ. «Յուվենտուսից» «Ռեալ» տեղափոխվելու համար «արքայական» ակումբը վճարել էր 47 մլն ֆունտ ստեռլինգ: Հարկ է նշել, որ Բեքհեմի այդ հայտարարությունն անպատասխան չի մնացել: «Չելսիի» ներկայացուցիչները նշել են, որ ակումբը Բեքհեմի հարցով չի բանակցում «Ռեալի» հետ:

«Բարսելոնը» հետաքրքրվում է Լարսոնով

Իսպանական «Բարսելոնի» ղեկավարությունը մտադիր է մրցաշրջանի ավարտից հետո թիմ հրավիրել շոտլանդական «Սելթիկի» շվեդ հարձակվող Հենրիկ Լարսոնին: «Բարսելոնի» փոխնախագահ Սանդրո Ռոսելի կարծիքով, Լարսոնը ժամանակակից հարձակվողների մեջ լավագույններից մեկն է եւ մեծ օգուտ կբերի թիմին: Շվեդ հարձակվողն ընթացիկ մրցաշրջանում էլ այլի է ընկնում արդյունավետ խաղով (21 գնդակ): Նա արդեն յոթերորդ մրցաշրջանն է անցկացնում «Սելթիկում» եւ հայտարարել է, որ առաջնության ավարտից հետո հեռանալու է թիմից: «Բարսելոնը» հույս ունի, որ Լարսոնը կընդունի իր հրավերը:

Որոշվել է խորհրդանշական հավասականը

Մարզական հրատարակությունների եվրոպական ընկերակցությունը որոշել է ազգային առաջնությունների արդյունքներով փետրվարի խորհրդանշական հավասականը: Բոլորից շատ ձայն (8) է ստացել «Բարսելոնի» բրազիլացի ֆուտբոլիստ Ռոնալդինյոն: Հավասականի կազմն այսպիսին է. Կասիլյաս («Ռեալ», 4 ձայն), Պույոլ («Բարսելոն», 3), Իսմայիլ («Վերդեր», 5), Ռոբերտո Կարլոս («Ռեալ», 4), Զեեդորֆ («Միլան», 6), Ռոնալդինյո («Բարսելոն», 8), Տոտի («Ռոմա», 5), Զիդան («Ռեալ», 6), Ռոնալդո («Ռեալ», 4), Անրի («Արսենալ», 7), Կասանո («Ռոմա», 6):

ՇԵՄՊԻՈՆՆԵՐԻ ԼԻԳԱ

Զիդանը կասեցրեց «Բավարիայի» առաջխաղացումը

Չորս հանդիպումներով ավարտվեց չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչ փուլը, որն ի հայս բերեց պատվավոր մրցանակի համար պայքարը շարունակող լավագույն ությակին: Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում Մադրիդում կայանալիք «Ռեալ» - «Բավարիա» հանդիպումը: Հիշեցնենք, որ Մյունխենում խաղն ընթացել էր դաշտի տերերի զգալի առավելությամբ, եւ միայն Օլիվեր Կանի կոպիտ սխալի հետեւանքով չէր հաջողվել հաղթանակ տոնել (1-1): Պատասխան խաղում «Ռեալը» զգալի կորուստներ ուներ կազմում: Վնասվածքի պատճառով բացակայում էր Ռոնալդոն, իսկ Ռոբերտո Կարլոսը որակազրկման պատճառով խաղադաշտ դուրս չէր եկել: Հարցականի տակ էր նաեւ Ռաուլի մասնակցությունը խաղին: Հուրախություն թիմի երկրպագուների, Ռաուլն ի վերջո մասնակցեց խաղին: Իսկ հանդիպման հերոսն, անկասկած, աշխարհի լավագույն ֆուտբոլիստ Զինեդին Զիդանն էր, որը թիմի գրոհների կազմակերպիչն էր: Եվ պատահական չէ, որ հենց Զիդանն էլ դարձավ հանդիպման միակ, բայց եւ հաղթական գոլի հեղինակը, իսկ «Ռեալին» քառորդ եզրափակիչի ուղեգիր պարգեւեց:

Պատվավոր մրցանակի համար պայքարը շարունակում է հաղթողի մյուս հավակնորդը եւս՝ անգլիական «Արսենալը»: Անգլիացիները դեռեւս առաջին խաղում լուրջ հայտ էին ներկայացրել քառորդ եզրափակիչի ուղեգրի համար՝ հյուրընկալվելիս 3-2 հաշվով պարտության մատնելով իսպանական «Սելթային»: Սեփական հարկի տակ «Արսենալն» առանց մեծ ջանքեր գործադրելու կրկին առավելության հասավ մրցակցի նկատմամբ շնորհիվ Տյերի Անրիի խփած 2 գոլերի: Անրին չեմպիոնների լիգայում իր գոլերի թիվը հասցրեց 5-ի եւ այժմ միայն մեկ գոլով է զիջում լավագույն ռմբարկուների ցուցակը գլխավորող Ռոյ Մաֆային («Բավարիա») եւ Պրոյին («Մոնակո»):

Մոսկվայի «Լոկոմոտիվին» չհաջողվեց հաղթահարել Ֆրանսիական «Մոնակոյի» արգելքը: Հյուրընկալվելիս ռուսաստանցի ֆուտբոլիստները 0-1 հաշվով զիջեցին «Մոնակոյին»: Մոսկվայում «Լոկոմոտիվը» հաղթել էր 2-1 հաշվով, այնպես որ Ֆրանսիական ակումբը հաջորդ փուլ մտավ ի հաշիվ մրցակցի դաշտում խփած գոլի: Պատասխան խաղում «Լոկոմոտիվին» մի շարք փորձություններ էին վիճակված: 19-րդ րոպեին հյուրերի դարպասին 11 մ հարված նշանակվեց, սակայն գերազանց խաղաց «Լոկոմոտիվի» դարպասպահ Օվչիննիկովը՝ հետ մղելով Պրոյի հարվածը: Իսկ 3 րոպե անց մրցավարը դաշտից հեռացրեց Լոսկովին: Դրանով հյուրերի անհաջողությունները չավարտվեցին: 60-րդ րոպեին Պրոն գրավեց «Լոկոմոտիվի» դարպասը եւ իր թիմին բաղձալի ուղեգիր պարգեւեց:

Պայքարը շարունակում է նաեւ չեմպիոնների լիգայի ներկայիս գավաթակիր «Միլանը»: Պրահայում տեղի «Սպարտայի» հետ առաջին խաղն ավարտվել էր ոչ-ոքի (0-0), իսկ Միլանում պարզապես ջախջախեց մրցակցին (4-1): Շարժատեսը ընդմիջումից հետո «Միլանի» կազմում արդյունավետ խաղով կրկին աչքի ընկավ Անդրեյ Շեւչենկոն՝ խփելով 2 գոլ: Իսկ հաշիվը բացեց Ֆիլիպո Ինզագին առաջին խաղակեսի վերջին րոպեին:

Այսպիսով, հայտնի դարձան այն ութ թիմերը, որոնք շարունակում են հավակնել չեմպիոնների գավաթին: Լավագույն ությակը կազմում են «Չելսին», «Պորտոն», «Լիոնը», «Դեպորտիվոն», «Մոնակոն», «Ռեալը», «Արսենալը» եւ «Միլանը»: Այսօր Նիոնում տեղի կունենա քառորդ եզրափակիչի վիճակահանությունը: Ի տարբերություն նախորդ փուլերի, վիճակահանությունը կույր է լինելու. թիմերը նախապես չեն բախվելու զամբյուղներում, բացի այդ միեւնույն երկրի ներկայացուցիչները եւս չեն տարանջատվելու:

Հայ ծանրորդին ՌԴ քաղաքացիություն շնորհվեց

Նովգորոդում բնակվող 22-ամյա հայ ծանրորդ Մկրտիչ Պողոսյանին օրերս ՌԴ քաղաքացիություն է շնորհվել: Այսպիսով հայ ծանրորդն իրավունք ստացավ հանդես գալու Ռուսաստանի ծանրամարտի հավասականում: Մկրտիչ Պողոսյանն այս տարվա փետրվարին դարձել էր Ռուսաստանի չեմպիոն, իսկ անցյալ տարի երկրի պատանեկան առաջնությունում ծանաչվել էր ուժեղագույնը՝ լրացնելով միջազգային կարգի սպորտի վարպետի նորման:

1982 թ. Հայաստանում ծնված ծանրորդը մշտական բնակություն է հաստատել Նովգորոդում: Մինչ նրան ՌԴ քաղաքացիություն շնորհելը, Մկրտիչին թույլատրել էին հանդես գալու ծանրամարտի երկրի առաջնությունում: Եվ հայ ծանրորդի փայլուն ելույթները հիմք հանդիսացան, որպեսզի դրականորեն լուծվի քաղաքացիություն շնորհելու հարցը: Այժմ հայ ծանրորդը հնարավորություն ունի ՌԴ հավասականի կազմում մասնակցելու միջազգային մրցաշարերի: Նա հանդիսանում է օլիմպիական հավասականի թեկնածու եւ ներկայում Տագանրոգում մասնակցում է ուսումնամարզական հավաքի:

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

բոլոր կազմակերպություններին եւ քաղաքացիներին՝ Գարիկ Գրիգորյանի (ծնվ. 17.05.1967 թ., քաղ. Արաքաս) գտնվելու վայրի վերաբերյալ իրենց տեղեկությունները հայտնել Շենգավիթի առաջին ոստյանի դատարանին:

ՀՀ Կենտրոնական բանկը 12.03.2004 թ. ժ. 9.00-ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	562.42	556.80	568.00
EUR	1	եվրո	689.30	685.20	693.40
RUR	1	ռուս. ռուբլի	19.68	18.50	20.90

«Ես ակնկալում եմ անկեղծ եւ անկաշկանդ զրույց ...»

Սկիզբը էջ 1

Մենք պետք է գնանք ողջ Հարավային Կովկասի տնտեսական եւ քաղաքական ինտեգրացիայի ճանապարհով: Բնականաբար այս փուլում դա չի սացվում բոլոր 3 երկրների նկատմամբ միանման անցյալի կոնֆլիկտների պատճառով, դրա համար մենք պետք է գնանք երկկողմ ինտեգրացիայի ճանապարհով: Եվ այդ իմաստով՝ Վրաստանի եւ Հայաստանի ու ֆանի որ մենք գնում ենք նույն ուղղությամբ՝ նաեւ Ադրբեջանի հետ, դա ճանապարհ է, որ մարդիկ մեզ մոտ ավելի լավ ապրեն:

Ինչ է նշանակում ինտեգրացիան: Դա նշանակում է բոլոր մաքսային արգելքների վերացումը, տարիֆների նույնականացումը, իջեցումը, որոշ դեպքերում էլ հանումը: Դա ոչ միայն մարդկանց շարժման ազատություն է, որը այսպես էլ գոյություն ունի, թեեւ սահմանին մարդկանց կանգնեցնում են: Ծիծաղելի է, որ Հայաստանից Վրաստան անցնելու համար մարդիկ սահմանի մոտ սպասում են 40 րոպե-մեկ ժամ, նույնը հետադարձ ճանապարհին: Բնականաբար դա անքույլատրելի է, դա անլուրջ է, ֆեոդալական մնացուկ: Պետք է ազատ տեղաշարժ, ապրանքների ազատ տեղաշարժ: Պետք է իրավաբանական համակարգի ունիֆիկացիա: Ես նկատի ունեմ, որ Վրաստանում գրանցված անձն ինքնաբերաբար համարվում է գրանցված Հայաստանում, եւ ընդհակառակը, ցանկացած հայկական իրավաբանական անձ չպետք է անցնի ամեն տեսակի իրավաբանական արգելքներ, նոր իրավաբանական գրանցում եւ այլն: Այդ ամենը պետք է լինի միատեսակ: Ես կարծում եմ, որ երբ կանհետանան այս արգելքները, լրիվ այլ իրավիճակ կլինի, ֆանի որ այսօր մեր երկրներից յուրաքանչյուրն առանձին թույլ է, որովհետեւ շուկան պահանջում է լայնացում, ավելի մեծ տարածություն: Բացի այդ, խոսելով եվրոպայի, Ամերիկայի, Ռուսաստանի հետ մեր հարաբերությունների մասին, ավելի լավ է սկզբից ունենալ միասնական եւ ավելի ուժեղ դիրքորոշում:

Եվրոպական օրինակով պետք է լինի մեզ մոտ: Ես կարծում եմ, որ դա ուտոպիա չէ, ես ունեմ կոնկրետ ժամկետներ, 1,5-2 տարի հետո մենք կհասնենք հենց նման արդյունքի:

- Պարոն Սահակաշվիլի, ձեր հայտարարության համաձայն, Դուք մտադիր եք Վրաց-հայկական հարաբերությունները դուրս բերել ֆորմալ շրջանակներից, որ եղել են Շեւարդնաձեի ժամանակ: Ի՞նչ կոնկրետ քայլեր է պատրաստում Վրաստանը Հայաստանից, որոնք կարող են նպաստել վրաց-հայկական հարաբերությունների խորացմանն ու ընդլայնմանը:

- Առաջ այսպես էր: Մենք բարեկամական հարաբերություններ ենք պահպանում Ադրբեջանի հետ եւ ունենք շատ տնտեսական ու քաղաքական կապեր եւ պարտադիր է, որ պետք է բարեկամական կապեր ունենանք նաեւ Հայաստանի հետ, բայց ոչ այն բանի համար, որ նման հարաբերություններ ունենք մեր մյուս հարեւանի հետ: Դա անլուրջ է: Մենք, բնականաբար, բարեկամական հարաբերություններ ունենք Ադրբեջանի հետ, եւ բնականաբար պետք է նաեւ բարեկամական հարաբերություններ ունենանք նաեւ Հայաստանի հետ, բայց ոչ այն բանի համար, որ դա պետք է, այլ որովհետեւ դա Հայաստանն է, մեծաքանակ հարեւանը, դա երկիր է, որի հետ մենք ունենք թ՛ անցյալի, թ՛ ներկայի այնքան կապեր, այնքան ընդհանուր պատմություն, մշակութային եւ մարդկային կապեր: Դա կարծես այս ռեգիոնի մեկ ընդհանրության շարունակությունն է: Բացի այդ, Հայաստանն այն երկիրն է, որ մինչեւ այսօր էլ ունի ամենամեծ ճանաչելիությունն այս ռեգիոնի երկրների մեջ: Բնականաբար, այսօր ռեգիոնի մյուս երկրների մասին էլ գիտեն, բայց Հայաստանը պահպանում է իր գրավչությունը, ամեն ինչից զատ Հայաստանն ունի Արեւմուտի ու Ռուսաստանի հետ բարեկամության եւ ինտեգրացիայի բազմադարյա պատմություն: Այս ամենը պետք է օգտագործել ի շահ ողջ ռեգիոնի: Ուստի Հայաստանից նախ ես սպասում եմ, որ մենք կմիասնականանենք մեր տնտեսական եւ իրավաբանական համակարգերը, ապա՝ մենք պետք է ավելի շատ խրախուսենք մարդկային կապերը ընկերությունների, մշակութային կապերի, կրթական հաստատությունների մակարդակում: Սա կարծես լիրիկական դեպք է, բայց ինձ համար կարեւոր է: Ես ուզում եմ, որ մենք կիսենք մեր փորձը: Օրինակ, մենք հիմա փորձում ենք կարգավորել մեր հարաբերությունները Ռուսաստանի հետ, եւ ես կարծում եմ, այս առումով Հայաստանը կարող է մեզ բավականին լուրջ օգնություն ցույց տալ, ֆանի որ Հայաստանը բարեկամական եւ սերտ կապեր ունի Ռուսաստանի հետ: Ինձ հետաքրքրում է, թե որոշ հարցեր ինչպես են լուծվել Հայաստանում: Ենթադրենք, ինչպես են նրանք հնար գտել, եթե հաշվի առնենք կոռուպցիան ոստիկանության առումով, ապա մեզ հետ դրանք անհամեմատելի են: Ինչպե՞ս են դուք կարողացել ավելի շատ կարգուկանոն հաստատել պետական ծառայության ոլորտում, ինչպե՞ս են կարողացել հասնել կարգավորման: Ես պատրաստ եմ թեկուզ շատ բաներ սովորել, ուստի իմ այցը միայն նախագահ Քոչարյանի հետ բարեկամանալու համար չէ: Ես կարող եմ նրանից նաեւ սովորել եւ կիրառել, ինչ կարելի է կիրառել: Ես հաճույքով կգնայի Հայաստան ոչ թե մի ֆանի օրով, այլ մեկ-երկու շաբաթով: Բայց նախագահությունը բանտի նման է, ժամկետները շատ սեղմ են, դու պետք է սպունգի նման ներծծես բոլորը: Եվ այս իմաստով ցանկացած այցի ճանաչողական ասպեկտը շատ կարեւոր է: Ես տարբեր մարդկանց հետ եմ հանդիպելու եւ սա ինձ համար «սրտի այցելություն է», իսկ սիրտը նաեւ էմոցիաներ ունի, այնտեղ ոչ միայն ռացիոնալ հարցեր են:

- Հայաստանում Վրաստանի նախկին դեսպանը նշանակվել է Սամցխե-Ջավախեթիում նախագահի լիազոր: Նախագահ Քոչարյանի հետ Նիկոլոզիշվիլու հանդիպման ժամանակ խոսվել է այդ ռեգիոնում առկա սոցիալ-տնտեսական խնդիրների մասին: Ի՞նչ կոնկրետ քայլեր կձեռնարկվեն այդ ուղղությամբ:

- Այս հարցն ինձ համար շատ կարեւոր է, ֆանի որ առաջին հերթին նա սիրում է Հայաստանը: Նա չի եղել պարզապես դեսպան: Նա սիրահարված է հայ մշակույթին, խոսում է հայերեն: Երկրորդը, այդ ռեգիոնը գտնվում է սոցիալական ծանր վիճակում ոչ այն պատճառով, որ բնակեցված է հայերով, այլ որովհետեւ ողջ Վրաստանն է ծանր վիճակում: Այնտեղ հատկապես ծանր կլիմայական պայմաններ են, եւ կան մի ֆանի մեծ խնդիրներ: Առաջին խնդիրը ճանապարհներն են: Իմ նախագահության հիմնական նպատակներից մեկն է կառուցել լավ ճանապարհներ Ախալքալաքում, որպեսզի Ախալքալաքն ինտեգրվի Վրաստանի տնտեսական կյանքում: 2-րդը, որ մենք կարողանանք հասնել նրան, որ այնտեղ գոյություն ունեցող բյուրոկրատական մեխանիզմները վերացվեն, որպեսզի հարցերը լուծվեն օպերատիվ, որոշ փաստաթղթեր ընդհանրապես պետք չեն: 3-րդը, որ մենք պետք է ստեղծենք տեղական ծրագրեր սոցիալ-տնտեսական զարգացման համար: Ռեգիոնում հիմնական գործառույթն ռուսական ռազմական բազան է: Բայց դա ժամանակավոր է, դա նորմալ չէ: Եվրոպական եւ այլ կառույցների հետ քննարկում ենք գյուղատնտեսության, տեխնոլոգիական, կոոպերատիվների ստեղծման ծրագրեր, որպեսզի եվրոպական գումարներով սկսեն աշխատել եւ 2-4 տարի հետո դրանք կարողանան ծածկել սեփական ծախսերը: Հայերը տաղանդավոր մարդիկ են եւ կհասնեն հաջողության, եթե նրանց համար ստեղծվեն նվազագույն պայմաններ:

- Պարոն Սահակաշվիլի, գաղտնիք չէ, թե ինչ կարեւորություն ունի արխազական երկաթուղին Հայաստանի համար: Ինչպե՞ս եք պատկերացնում ինտեգրացիան, երբ չի աշխատում երկաթուղին:

- Սա ինձ համար շատ կարեւոր հարց է: Դա վերաբերում է ոչ միայն Հայաստանին, այլեւ Վրաստանին: Այս խնդրում ամեն ինչ կախված է լինելու, թե ինչ առաջընթաց կնկատվի Գալիի շրջանում: Մենք ստեղծել ենք եռակողմ հանձնաժողով Ռուսաստանի եւ Աբխազիայի փաստացի իշխանությունների հետ: Այդ հանձնաժողովը հիմա աշխատանքներ է տանում եւ առաջին հարցը տնտեսական ենթակառուցվածքներին է վերաբերում: Ռուսաստանի կողմից կա պատրաստականություն: Ես կարծում եմ, որ շատ են այն աբխազները, որոնք հասկանում են տնտեսական ենթակառույցների կարեւորությունը: Այս պահին կարեւոր է բարի կամքը, ինչ մենք ավելի շատ ունենք: Փակուղային վիճակը վերաբերում է ոչ միայն Հայաստանին, այլեւ Վրաստանին: Երկաթուղին բացելու առումով ես գնալու եմ խիզախ քայլերի:

- Ի՞նչ նկատի ունեք խիզախ քայլեր ասելով:

- Վրաստանի նախորդ իշխանությունների օրոք ասվում էր, որ ֆանի դեռ չի որոշվել Աբխազիայի կարգավիճակը, չի կարելի տնտեսական հարաբերությունների գնալ: Ես այդպես չեմ կարծում, այլ համարում եմ, որ դա զուգահեռ գործընթաց է: Պետք է սկսել տնտեսական համագործակցությունից եւ ոչ թե հակառակը:

- Պարոն Սահակաշվիլի, Ի՞նչ դեր կարող է խաղալ Վրաստանը հայ-թուրքական հարաբերություններում:

- Վրաստանը պատրաստ է ունենալ առավելագույն դերակատարություն Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ կառուցողական հարաբերությունների առումով: Ես կարծում եմ, որ Թուրքիան դրան ավելի ֆան պատրաստ է: Թուրքիան հասկանում է Հայաստանի կարեւորությունը: Անշուշտ, Թուրքիան ունի մոտ գործընկերային հարաբերություններ Ադրբեջանի հետ: Դա պետք է հաշվի առնել, բայց մյուս կողմից Թուրքիան հրաշալի հասկանում է, որ տարածաշրջանում խաղաղության հասնելու համար անհրաժեշտ է հարաբերություններ զարգացնել Հայաստանի հետ: Դրա համար մենք շատ ուրախ կլինենք եւ կփորձենք աջակցել: Դա մեզ համար շատ կարեւոր է, դա կայունության եւ զարգացման գործոն է մեզ համար: Թուրքիան մինչ այժմ դրական դեր է խաղացել Վրաստանում: Ես կարծում եմ, որ ինչպես ՀՀ-ն կարող է օժանդակել Ռուսաստանի հետ մեր հարաբերություններում, նույնը կարող է անել Վրաստանը հայ-թուրքական հարաբերություններում:

Հարցազրույցը վարեցին
ԹԱԹՈՒԼ ՀԱՅՈՐԲՅԱՆԸ եւ
ԱՂԱՐԱԼԻ ՀԱԲՈՒՄՅԱՆԸ

Թբիլիսի

training and resource center

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

USAID

Հասարակական կազմակերպությունների
ուսուցման եւ տեղեկատվական միջոցների կենտրոն

USAID

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Համայնքների զարգացման փոքր դրամաշնորհների ծրագիր

Ամերիկայի հայկական համագումարի Հասարակական կազմակերպությունների ուսուցման եւ տեղեկատվական միջոցների կենտրոնը (ԱՀՀ ՀԿ կենտրոն) հայտարարում է **Համայնքների զարգացման փոքր դրամաշնորհների ծրագիր**: Այն կոչված է ***աջակցել Վանաձոր քաղաքի Վանաձոր եւ Բագում թաղամասերի զարգացմանը***:

Դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորումը տրամադրել է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (ԱՄՆ ՄԶԳ):

Ծրագրին կարող են մասնակցել Վանաձորում տեղակայված /Վանաձորում իրավաբանական հասցե ունեցող/ ոչ առեւտրային կազմակերպությունները *(հասարակական կազմակերպություններ, հիմնադրամներ եւ իրավաբանական անձանց միություններ)*: Մասնաճյուղերը պետք է ներկայացնեն իրենց կարգավիճակը հավաստող փաստաթուղթ:

Դրամաշնորհային ծրագիրը մրցութային է: Մեկ դրամաշնորհի չափը մինչեւ 4.100.000 դրամ է: Մրցույթին մասնակցելու համար կազմակերպությունները պետք է ներկայացնեն ծրագրերի համառոտ առաջարկների փաթեթներ *ուղղված է. Վանաձորի Բագում եւ Վանաձոր թաղամասերի ենթակառուցվածքների գործունեության բարելավմանը եւ/կամ բնակչության առողջության առաջնային պահպանմանը եւ/կամ խոցելի խմբերի աջակցությանը*: Յուրաքանչյուր դիմող կազմակերպություն կարող է ներկայացնել միայն մեկ ծրագրի համառոտ առաջարկ: Եթե ծրագրելու մրցույթի հաջորդ փուլին ներկայացնելով ծրագրի ծավալուն առաջարկ:

Ծրագրի համառոտ առաջարկ գրելու պահանջները տրված են ***«Հայց ծրագրի համառոտ առաջարկի համար»*** փաստաթղթում, որը կարելի է ստանալ ԱՀՀ ՀԿ կենտրոնի ինտերնետային www.ngoc.am էջից կամ ԱՀՀ ՀԿ կենտրոնի Վանաձորի հենակետից, հասցեն **Վարդանանց 25, Լոռու մարզային գրադարան, 3-րդ հարկ**: Դիմել՝ ***Արփինե Հակոբյանին***:

Ծրագրի շրջանակներում կազմակերպվելու է «Համայնքների զարգացում» թեմայով գործնական պարապմունք, որին հրավիրվում են մրցույթին մասնակցել ցանկացող բոլոր ոչ առեւտրային կազմակերպությունները: Պարապմունքը կանցկացվի ***ս/թ մարտի 15-ին, ժամը 12:00-15:00***, վերը նշված հասցեով:

Ծրագրերի համառոտ առաջարկների վերաբերյալ նախատեսված է խմբային խորհրդատվական մեկ հանդիպում ***ս/թ մարտի 22-ին, ժ. 13:00-15:00-ը, վերոնշյալ հասցեով***:

Ծրագրերի համառոտ առաջարկների փաթեթների հանձնման վերջնաժամկետն է **ս/թ մարտի 31-ը, մինչեւ ժ.16:00-ը**: Փաթեթները պետք է հանձնել վերոնշյալ հասցեով, Արփինե Հակոբյանին:

Սահմանված ժամկետից դուրս ներկայացված փաթեթները չեն ընդունվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանը սկսում է **2004-2005** ուսումնական տարվա ընդունելությունը **մագիստրոսի** կոչում շնորհող հետեւյալ ծրագրերով՝

- ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ
- ՀԱՄԱԿԱՐԳՉԻ ԵՎ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔՆԵՐ
- ԳՈՐԾԱՐԱՐ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ
- ՔԱՂԱՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
- ՀԱՆՐԱՅԻՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
- ԱՆԳԼԵՐԵՆԻ ԴԱՍԱՎԱՆԴՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՈՒ
- ԱՆԳԼԵՐԵՆԻ՝ ՈՐՊԵՍ ՕՏԱՐ ԼԵԶՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՎԿԱՅԱԳԻՐ

Բարձրագույն կրթությունը եւ անգլերեն լեզվի լավ իմացությունը պարտադիր են:

Մարտի 20-ին, ժ. 11⁰⁰ -ին հրավիրում ենք ՀԱՀ-ի մեծ դահլիճ մասնակցելու **բաց դռների օրվան**:

Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետն է
ապրիլի 12-ը, ժ. 15⁰⁰
Տեղեկությունների համար դիմել՝
Երեւան, Մարշալ Բաղրամյան 40, 19 գրասենյակ
Հեռ. 51-27-93, 51-27-92

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիլ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրուած է տպագրութեան՝ 11. 03. 2004 Գինը 100 դրամ